Ժողովրդավարության զարգացման հիմնադրամ

prague civil society centre

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն Հայաստան

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆ
2026

Ժողովրդավարության զարգացման հիմնադրամ

prague civil society centre

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն Հայաստան

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆ
2026

«Ժողովրդավարության հանրային ընկալումները Հայաստանում» ուսումնասիրությունն իրականացվել է Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն (ՀՌԿԿ)-Հայաստան հիմնադրամի կողմից: Զեկույցի պատրաստումը հնարավոր է դարձել Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի և Պրահայի քաղաքացիական հասարակության կենտրոնի օժանդակությամբ: Զեկույցում տեղ գտած կարծիքները և տեսակետները կարող են չհամընկնել Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի և Պրահայի քաղաքացիական հասարակության կենտրոնի տեսակետների և դիրքորոշումների հետ:

Զեկույցի կամ դրա առանձին մասերի վերահրատարակումը կամ վերարտադրությունը էլեկտրոնային կամ տպագիր տարբերակներով պետք է իրականացվի պատշաճ մեջբերումներով:

Մեջբերման օրինակ.
Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամ. (2026) Ժողովրդավարության հանրային ընկալումները Հայաստանում: Երևան: Ժողովրդավարության զարգացման հիմնադրամ: Պրահայի քաղաքացիական հասարակության կենտրոն:

© Բոլոր իրավունքները պաշտպանված են: ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամ 2026:

Կապ. crrc@crrc.am | crrc.am

Հեղինակ

Անժելա Ղալամդարյան

Խմբագիրներ

Լիլիթ Եզեկյան

Հայկ Սմբատյան

Սեդա Անանյան

Նիկոլ Մարգարյան

Արուսյակ Ոսկանյան

Հետազոտական խումբ

Մարիամ Բալիշյան

Աստղիկ Գրիգորյան

Գայանե Մանուկյան

Բովանդակություն

Բաժին 1. Ժողովրդավարության զարգացումը հետխորհրդային Հայաստանում. ներածական ակնարկ 2

1.1 Հայաստանի ժողովրդավարական համակարգի ձևավորումն ու ինստիտուցիոնալ զարգացումը անկախությունից հետո 3

1.2 Հայաստանի Հանրապետության ժողովրդավարության վարկանիշն՝ ըստ միջազգային չափումների 5

Բաժին 2. Հետազոտության շրջանակներ և մեթոդաբանական ռազմավարություն 7

2.1 Շրջանակներ 8

2.2 Մեթոդ և ընտրանք 8

2.3 Հարցաթերթ և դաշտային աշխատանքներ 9

2.4 Տվյալների որակ և մշակում 9

2.5 Վերլուծական մոտեցում 10

2.6 Էթիկական նկատառումներ 12

2.7 Սահմանափակումներ 12

Բաժին 3. Հիմնականարդյունքներ 13

3.1 Ժողովրդավարության բովանդակությունը հանրային ընկալումներում 14

3.2 Ժողովրդավարական երկրի հատկանիշները հանրային պատկերացումներում 21

3.3 Մասնակցություն և ներգրավվածություն 34

Բաժին 4. Եզրակացություններ և առաջարկներ 41

4.1 Եզրակացություններ 42

4.2 Տվյալներից բխող ծրագրային հնարավոր ուղղություններ 43

Գրականության ցանկ 46

Հավելվածներ 48

Բաժին 1.

Ժողովրդավարության զարգացումը հետխորհրդային Հայաստանում. ներածական ակնարկ

1.1 Հայաստանի ժողովրդավարական համակարգի ձևավորումն ու ինստիտուցիոնալ զարգացումը անկախությունից հետո

Հայաստանի Հանրապետությունն (ՀՀ) անկախություն է հռչակել 1991 թ.-ի սեպտեմբերի 21-ին՝ Խորհրդային Միության փլուզման գործընթացի համատեքստում: Անկախությունից հետո երկրի քաղաքական զարգացումը ընթացել է պետականաշինության, ինստիտուցիոնալ ձևավորման, ընտրական գործընթացների զարգացման և կառավարման համակարգի փոփոխությունների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության աստիճանական ակտիվացման պայմաններում:

1990-ականներ. պետականաշինություն և ինստիտուցիոնալ հիմքերի ձևավորում

Անկախության առաջին տարիներին Հայաստանի առջև կանգնած հիմնական խնդիրներն էին պետական կառավարման համակարգի ձևավորումը, քաղաքական և իրավական ինստիտուտների ստեղծումը, ինչպես նաև նոր տնտեսական և հասարակական հարաբերությունների կարգավորումը: Այս շրջանում ձևավորվեցին պետական իշխանության հիմնական մարմինները, ընդունվեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, անցկացվեցին նախագահական, խորհրդարանական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ[1]: Միաժամանակ, ձևավորվեցին բազմակուսակցական քաղաքական համակարգի և քաղաքացիական հասարակության զարգացման իրավական ու ինստիտուցիոնալ հիմքերը[2]: Իրականացվեց վարչատարածքային նոր բաժանում, ըստ որի նախկին շրջանների փոխարեն ձևավորվեց Երևանը՝ որպես առանձին վարչատարածքային միավոր և 10 նոր մարզ՝ 931 համայնքներով[3]:

2000-ականներ և 2010-ականների առաջին կես. ինստիտուցիոնալ բարեփոխումներ

Հետագա տարիներին շարունակվեցին պետական և քաղաքական ինստիտուտների զարգացմանն ուղղված գործընթացները: Իրականացվեցին սահմանադրական փոփոխություններ, վերանայվել են ընտրական օրենսգրքի դրույթները[4], ինչպես նաև իրականացվեցին հանրային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի կատարելագործմանն ուղղված նախաձեռնություններ: 2005 թ.-ին վերանայվեց նաև վարչատարածքային բաժանումը, որի արդյունքում Երևանի մարզային կարգավիճակը փոխարինվեց համայնքայինով[5]:

Այս ժամանակահատվածում քաղաքացիական հասարակության դերակատարությունը դարձավ ավելի տեսանելի[6]: Հասարակական կազմակերպությունները (այսուհետ՝ ՀԿ), փորձագիտական շրջանակները, մեդիան և քաղաքացիական նախաձեռնությունները սկսեցին ավելի ակտիվ մասնակցել ընտրական գործընթացների դիտարկմանը, հանրային քաղաքականության քննարկումներին, մարդու իրավունքների, կոռուպցիայի դեմ պայքարի, շրջակա միջավայրի պաշտպանության և հաշվետվողական կառավարման օրակարգերի առաջմղմանը[7]: Ժողովրդավարական տեսանկյունից այս շրջանը բնութագրվում է ոչ միայն ինստիտուցիոնալ բարեփոխումներով, այլև պետություն-հասարակություն հարաբերությունների

1. Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, 1995: Տե՛ս նաև ՀՀ ԿԸՀ պաշտոնական կայք, «Ընտրություններ» բաժին՝ https://www.elections.am/, դիտված է 25.06.2026
2. Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, 1995:
3. Տե՛ս ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին», 1995:
4. Տե՛ս ՀՀ Սահմանադրության փոփոխություններ, 2005, ARLIS: Տե՛ս նաև ՀՀ ընտրական օրենսգիրք, 1999 և ՀՀ ընտրական օրենսգիրք, 2011:
5. Տե՛ս ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին», փոփոխություններով: Երևա նի համայնքային կարգավիճակի համար հատկապես կարևոր է 26.12.2008 փոփոխությունը:
6. Տե՛ս Freedom House, Nations in Transit 2010: Armenia՝ https://www.refworld.org/reference/annualreport/freehou/2010/76718 , դիտված է 29.06.2026
7. Տե՛ս Kostanyan, "The OSCE and the Anti-Corruption Movement in Armenia՝ https://www.ifsh.de/file-CORE/documents/yearbook/english/04/Kostanyan.pdf, դիտված է 29.06.2026

աստիճանական վերափոխմամբ, որտեղ քաղաքացիների մասնակցությունը և հանրային վերահսկողությունը սկսեցին ավելի կարևոր տեղ զբաղեցնել:

2015-2018 թվականներ. կառավարման համակարգի փոփոխություն

2015 թ.-ի սահմանադրական փոփոխությունների արդյունքում Հայաստանը կիսանախագահական կառավարման համակարգից անցում կատարեց խորհրդարանական կառավարման համակարգի[8]: Կառավարման նոր մոդելը մեկնարկեց 2017 թ.-ին կայացած խորհրդարանական ընտրություններից հետո և լիարժեք իր իրավունքների մեջ մտավ 2018 թ.-ին, երբ ավարտվեց ՀՀ վերջին նախագահի պաշտոնավարման ժամկետը[9]:

2018 թ.-ի իրադարձություններ. նոր քաղաքական իրավիճակ և բարեփոխումների շարունակություն

2018 թ.-ին Հայաստանում տեղի ունեցան հանրային լայն մասնակցությամբ քաղաքական իրադարձություններ, որոնք հայտնի դարձան «Թավշյա հեղափոխություն» անվամբ: Այդ իրադարձությունների արդյունքում փոխվեց գործադիր իշխանությունը և ձևավորվեց նոր քաղաքական իրավիճակ: Դրան հաջորդած տարիներին անցկացվեցին արտահերթ ընտրություններ և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ[10], շարունակվեցին պետական կառավարման, դատական համակարգի[11] և այլ ոլորտների բարեփոխումների գործընթացները: Այդ իրադարձությունները կարևոր շրջադարձային փուլ էին Հայաստանի ժողովրդավարական զարգացման մեջ, քանի որ ցույց տվեցին քաղաքացիական հասարակության, հանրային մոբիլիզացիայի և խաղաղ հավաքների նշանակությունը քաղաքական փոփոխությունների գործընթացում: Քաղաքացիների լայն շրջանակների մասնակցությունը, քաղաքացիական նախաձեռնությունների ակտիվությունը, անկախ մեդիայի և ՀԿ-ների ներգրավվածությունը նպաստեցին հանրային պահանջների ձևակերպմանը և քաղաքական օրակարգի փոփոխությանը[12]:

2020 թ.-ից հետո. հետպատերազմյան քաղաքական օրակարգ

2018 թ.-ի «Թավշյա հեղափոխությանը» հաջորդեց Ադրբեջանի հետ Լեռնային Ղարաբաղի հարցով երկարատև կոնֆլիկտի սրումը, որն արդյունքում հանգեցրեց 2020 թ.-ի պատերազմին: 2020 թ.-ի պատերազմից հետո Հայաստանի քաղաքական օրակարգում առավել կարևոր տեղ են զբաղեցրել անվտանգության, արտաքին քաղաքականության, պետական կառավարման և հասարակական համախմբվածության հետ կապված հարցերը: Այս ժամանակահատվածում նույնպես շարունակվեցին ընտրական և քաղաքական գործընթացները, ներառյալ՝ 2021 թ.-ի արտահերթ խորհրդարանական ընտրությունները և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները[13]:

Այսպիսով, անկախությունից ի վեր Հայաստանի քաղաքական համակարգը ձևավորվել և զարգացել է պետականաշինության, ինստիտուցիոնալ փոփոխությունների, ընտրական գործընթացների և կառավարման համակարգի վերափոխումների պայմաններում:

8. Տե՛ս ՀՀ Սահմանադրության փոփոխություններ, 2005, ARLIS: Տե՛ս նաև https://www.primeminister.am/hy/system-of-government/, դիտված է 25.06.2026
9. Տե՛ս https://www.president.am/en/Powers-of-the-President/ , դիտված է 25.06.2026
10. Տե՛ս ՀՀ ԿԸՀ պաշտոնական կայք, «Ընտրություններ» բաժին՝ https://www.elections.am/, դիտված է 25.06.2026
11. Տե՛ս ՀՀ Արդարադատության նախարարության դատաիրավական բարեփոխումների ռազմավարությունների էջը https://moj.am/page/491, դիտված է 25.06.2026
12. Տե՛ս Elspeth Suthers and Miriam Lanskoy, "Armenia's Velvet Revolution," Journal of Democracy, 2019; Freedom House, Freedom on the Net 2018: Armenia; U.S. Department of State, Armenia 2018 Human Rights Report
13. Տե՛ս ՀՀ ԿԸՀ պաշտոնական կայք, «Ընտրություններ» բաժին՝ https://www.elections.am/, դիտված է 25.06.2026

1.2 Հայաստանի Հանրապետության ժողովրդավարության վարկանիշն՝ ըստ միջազգային չափումների

Հայաստանի ժողովրդավարական զարգացումը կարելի է դիտարկել նաև միջազգային համեմատական ցուցիչների (ինդեքսների) միջոցով: Դրանք հնարավորություն են տալիս գնահատելու ժողովրդավարության ինստիտուցիոնալ և գործընթացային տարբեր բաղադրիչներ՝ քաղաքական իրավունքները, քաղաքացիական ազատությունները, ընտրական գործընթացները, պետական կառավարումը, քաղաքական մասնակցությունը, իրավունքի գերակայությունը, անկախ լրատվամիջոցները և ինստիտուցիոնալ հաշվետվողականությունը: Միևնույն ժամանակ, միջազգային ցուցիչները հիմնված են տարբեր մեթոդաբանությունների, գնահատման սանդղակների և չափման տրամաբանությունների վրա: Դրանք նաև հիմնված են տարբեր տարիների չափումների վրա: Հետևաբար դրանց արդյունքները պետք է դիտարկել ոչ թե որպես ուղղակիորեն համեմատելի միավորներ, այլ որպես Հայաստանի ժողովրդավարական զարգացումը նկարագրող լրացուցիչ աղբյուրներ:

Ըստ «Ֆրիդոմ Հաուս» կազմակերպության «Ազատությունն աշխարհում 2026» զեկույցի՝ Հայաստանն ստացել է 54 միավոր 100 հնարավորից և դասակարգվել որպես «մասամբ ազատ» երկիր[14]: Ընդհանուր գնահատականը ձևավորվում է երկու հիմնական բաղադրիչի՝ քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների հիման վրա: Հայաստանի դեպքում քաղաքական իրավունքների ցուցանիշը կազմել է 23 միավոր՝ 40 հնարավորից, իսկ քաղաքացիական ազատություններինը՝ 31 միավոր՝ 60 հնարավորից[15]:

«Էկոնոմիսթ Ինթելիջենս Յունիթ» հետազոտական կենտրոնի «Ժողովրդավարության ցուցիչ 2024» զեկույցի համաձայն՝ Հայաստանի ցուցանիշը կազմել է 5.35 միավոր 10 հնարավորից, և երկիրը դասակարգվել է «հիբրիդային ռեժիմների» խմբում: Այս ցուցիչը երկրները գնահատում է հինգ հիմնական բաղադրիչով՝ ընտրական գործընթացներ և բազմակարծություն, կառավարության գործունեություն, քաղաքական մասնակցություն, քաղաքական մշակույթ և քաղաքացիական ազատություններ[16]:

«Ժողովրդավարության բազմազանություններ» նախագծի «Ընտրական ժողովրդավարության ցուցիչ 2025»-ի համաձայն՝ Հայաստանի ցուցանիշը կազմել է 0.61 միավոր՝ 0-ից 1 սանդղակով: Այս ցուցիչը կենտրոնանում է ընտրական ժողովրդավարության առանցքային բաղադրիչների վրա՝ ընտրական իրավունքի ընդգրկվածություն, ընտրությունների ազատ և արդար բնույթ, ինչպես նաև արտահայտման և միավորումների ազատությունների ապահովում[17]:

«Ֆրիդոմ Հաուս» կազմակերպության «Անցումային երկրներ 2024» զեկույցում Հայաստանի ժողովրդավարության գնահատականը կազմել է 3.07 միավոր՝ 1-ից 7 սանդղակով: Զեկույցը գնահատում է ժողովրդավարական կառավարման ինստիտուցիոնալ բաղադրիչները՝ ներառյալ ազգային և տեղական կառավարումը, ընտրական գործընթացները, քաղաքացիական հասարակությունը, անկախ լրատվամիջոցները, դատական համակարգը և կոռուպցիայի վերահսկումը[18]:

14. Տե՛ս Freedom House. Freedom in the World 2025: Armenia Country Report. https://freedomhouse.org/country/armenia/freedom-world/, դիտված է՝ 10.06.2026:
15. Տե՛ս նույն տեղում:
16. Տե՛ս Statbase. Democracy index, Armenia (2006–2024). https://statbase.org/data/arm-democracy-index/, դիտված է՝ 10.06.2026:
17. Տե՛ս V-Dem / Our World in Data. Electoral Democracy Index, 2025. https://ourworldindata.org/grapher/electoral-democracy-index, դիտված է՝ 10.06.2026
18. Տե՛ս Freedom House. Nations in Transit 2024: Armenia Country Report. https://freedomhouse.org/country/armenia/nations-transit/2024, դիտված է՝ 10.06.2026

Նշված միջազգային ցուցիչների շրջանակը, գնահատման սանդղակները և Հայաստանի վերաբերյալ հիմնական ցուցանիշները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Հայաստանի ժողովրդավարության վարկանիշն՝ ըստ միջազգային չափումների[19]

Ցուցիչ / աղբյուր	Հայաստանի ցուցանիշը
«Ֆրիդոմ Հաուս», «Ազատությունն աշխարհում 2026»	54/100
«Ֆրիդոմ Հաուս», «Ազատությունն աշխարհում 2026», քաղաքական իրավունքներ	23/40
«Ֆրիդոմ Հաուս», «Ազատությունն աշխարհում 2026», քաղաքացիական ազատություններ	31/60
«Ժողովրդավարության բազմազանություններ» նախագիծ, «Ընտրական ժողովրդավարության ցուցիչ 2025»	0.61/1
«Էկոնոմիստ ինթելիջենս յունիթ», «Ժողովրդավարության ցուցիչ 2024»	5.35/10
«Ֆրիդոմ Հաուս», «Անցումային երկրներ 2024»	35/100

Նշում. Աղյուսակում ներկայացված ցուցիչներն ունեն հաշվարկային տարբեր մեթոդաբանություններ և տարբեր գնահատման սանդղակներ, ուստի դրանց ցուցանիշները պետք է դիտարկել առանձին՝ ոչ որպես ուղղակի համեմատելի միավորներ:

Հարկ է նշել, որ միջազգային ցուցիչները հնարավորություն են տալիս գնահատելու Հայաստանի ժողովրդավարական զարգացման ինստիտուցիոնալ և գործընթացային կողմերը, սակայն դրանք ամբողջությամբ չեն բացահայտում, թե ինչպես են քաղաքացիները հասկանում ժողովրդավարությունը, ինչ ակնկալիքներ ունեն ժողովրդավարական կառավարման համակարգից և որքանով են պատրաստ մասնակցել հանրային ու քաղաքական գործընթացներին: Հենց այս բացը լրացնելուն է ուղղված սույն հետազոտությունը, որի նպատակն է ուսումնասիրել և տվյալ պահին չափել Հայաստանի հանրության շրջանում ժողովրդավարության, ժողովրդավարական արժեքների և գործընթացների նկատմամբ առկա ընկալումներն ու վերաբերմունքը, ինչպես նաև քաղաքացիական և ընտրական մասնակցության հետ կապված դիրքորոշումները:

19. Ցուցանիշները ներկայացված են ըստ առկա ամենաթարմ տվյալների:

Բաժին 2.

Հետազոտության
շրջանակներ և
մեթոդաբանական
ռազմավարություն

2.1 Ծրջանակներ

Սույն հետազոտության նպատակը **հանրային ընկալումների վերաբերյալ գիտելիքի լրացումն է՝** Հայաստանում ժողովրդավարության վերաբերյալ հանրային ընկալումների, ժողովրդավարական արժեքների և գործընթացների նկատմամբ հանրային վերաբերմունքի, ինչպես նաև քաղաքացիական և ընտրական մասնակցության հետ կապված դիրքորոշումների նույնականացման միջոցով: Հետազոտությունը միտված է բացահայտելու նաև սոցիալ-ժողովրդագրական տարբեր խմբերի շրջանում ժողովրդավարության մասին ընկալումների և մասնակցային վարքագծի ընդհանրություններն ու առանձնահատկությունները:

Այս նպատակին համապատասխան՝ հետազոտությունը փորձում է պատասխանել հետևյալ հիմնական հարցերին.

- Ինչպե՞ս է ընկալվում ժողովրդավարությունը հայաստանյան հանրության շրջանում:
- Ինչպիսի՞ն է, ընդհանուր առմամբ, ժողովրդավարական արժեքների և գործընթացների նկատմամբ վերաբերմունքը հայաստանյան հանրության մեջ:
- Ինչպե՞ս է ընկալվում և մեկնաբանվում ընտրական գործընթացներին և քաղաքացիական գործողություններին քաղաքացիների մասնակցությունը:
- Որո՞նք են ժողովրդավարության մասին հանրային ընկալումներն ու վերաբերմունքը ձևավորող ժողովրդագրական, մշակութային և սոցիալ-տնտեսական գործոնները:

Հետազոտության նախագիծն ու մեթոդաբանությունը մշակվել են այնպես, որ հնարավոր լինի ապահովել Հայաստանում բնակվող չափահաս (18 և ավելի բարձր տարիքի) բնակչության՝ ժողովրդավարության վերաբերյալ ընկալումների, վերաբերմունքների և մասնակցային դիրքորոշումների ներկայացուցչական, համադրելի և վերլուծելի տվյալների հավաքագրումը: Այս բաժնում ներկայացվում են հետազոտության նախագիծը, տվյալների հավաքագրման մոտեցումը, ընտրանքի ձևավորման սկզբունքները, դաշտային աշխատանքների կազմակերպումը, տվյալների որակի վերահսկման մեխանիզմները, վերլուծական մոտեցումը, ինչպես նաև հետազոտության էթիկական նկատառումներն ու սահմանափակումները:

2.2 Մեթոդ և ընտրանք

Իրականացվել է քանակական հետազոտություն՝ պարզ պատահական ընտրանքի հիման վրա: Ներկայացուցչական տվյալների հավաքագրումն ապահովվել է համակարգչային աջակցությամբ հեռախոսային հարցազրույցների միջոցով (CATI): Տվյալների հավաքագրումը կազմակերպվել է 2026 թ.-ի ապրիլի 9-ից ապրիլի 23-ն ընկած ժամանակահատվածում:

Հետազոտության թիրախային խումբը Հայաստանում բնակվող 18 և ավելի բարձր տարիքի անձինք են, ովքեր առնվազն վերջին 6 ամսվա ընթացքում բնակվել են Հայաստանում: Ընտրանքը ձևավորվել է բջջային հեռախոսահամարների պատահական գեներացման մեթոդով (RDD), ինչը թիրախային խմբի ներկայացուցիչներին հնարավորություն է տվել պատահականության սկզբունքով ընդգրկվել ընտրանքային համակազմում:

Ընդհանուր առմամբ՝ կատարվել է **60,916** զանգի փորձ, որոնցից **7201-ի** դեպքում հնարավոր է եղել կապ հաստատել պատասխանողի հետ, և նրանցից **1500-ի** հետ իրականացվել է հարցազրույց:

Սահմանային սխալն այս ընտրանքի դեպքում կազմել է մոտ **±2.5** տոկոսային կետ՝ **95%** վստահության միջակայքում: Պետք է հաշվի առնել, որ սահմանային սխալը կարող է տարբեր լինել առանձին ենթախմբերի համար՝ կախված տվյալ ենթախմբում հարցվածների թվից:

Այսպիսով՝ հետազոտությանը մասնակցել է Հայաստանի 18 և ավելի տարիքի **1500** բնակիչ: Նրանց 54.5%-ը կանայք են, իսկ 45.5%-ը՝ տղամարդիկ: Հարցվածների 22.5%-ը 18–34 տարեկան է, 42.8%-ը՝ 35–54 տարեկան, իսկ 34.7%-ը՝ 55 և ավելի: Ընտրանքը գրեթե հավասարապես բաշխված է Երևանի (34.5%), այլ քաղաքային (31.3%) և գյուղական բնակավայրերի (34.0%) միջև:

Ընտրանքային համակազմում ընդգրկված մասնակիցների սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների մանրամասները ներկայացված են Հավելված 1-ում:

2.3 Հարցաթերթ և դաշտային աշխատանքներ

Բոլոր հարցազրույցներն անցկացվել են հայերեն՝ ստանդարտացված հարցաթերթի հիման վրա: Հարցաթերթը ներառել է շուրջ 35 հարց՝ ժողովրդավարության ընկալումների, ժողովրդավարական արժեքների և գործընթացների նկատմամբ վերաբերմունքի, կառավարման ձևերի, քաղաքացիական և ընտրական գործընթացներին մասնակցության, ինչպես նաև սոցիալ-ժողովրդագրական բնութագրերի վերաբերյալ (տե՛ս Հավելված 2-ը): Տվյալների հավաքագրումն իրականացվել է SurveyCTO հարթակի միջոցով, որտեղ նախապես ծրագրավորվել էր հարցաթերթը՝ ներառելով տրամաբանական անցումները, պատասխանների կոդավորումը և տվյալների որակի նախնական վերահսկման գործիքները:

2.4 Տվյալների որակ և մշակում

Տվյալների որակն ապահովելու նպատակով վերահսկման մի շարք մեխանիզմներ են կիրառվել հետազոտության տարբեր փուլերում՝ դաշտային աշխատանքների նախապատրաստումից մինչև տվյալների վերջնական մշակում:

- **Դաշտային աշխատանքների նախապատրաստման փուլում** հարցաթերթը ներմուծվել է SurveyCTO հարթակ, մշակվել են տվյալների որակի վերահսկման և ընթացիկ մշտադիտարկման գործիքները, ինչպես նաև իրականացվել են հարցազրուցավարների վերապատրաստումներ: Վերջիններիս մասնակցել է ընդհանուր 40 հարցազրուցավար, իսկ տվյալների հավաքագրման գործընթացում ներգրավվել է 29-ը: Վերապատրաստումները կազմակերպվել են տվյալների որակի ապահովման նպատակով: Դրանց ընթացքում հարցազրուցավարներին ներկայացվել են հետազոտության նպատակները, հարցաթերթի կառուցվածքը, հարցերի ընթերցման և պատասխանների գրանցման միասնական կանոնները, ինչպես նաև էթիկական սկզբունքները և տվյալների որակի վերահսկման պահանջները: Գործիքի մշակումից հետո հարցաթերթը թվայնացվել է այնպես, որ նպաստի դաշտային աշխատանքի որակի վերահսկմանը. SurveyCTO ծրագրում պարտադիր են սահմանվել հարցերի անհրաժեշտ անցումները, իսկ տեխնիկական փոփոխականները ծրագրավորվել են հարցազրուցավարների աշխատանքի հետագա մշադիտարկման, հնարավոր շեղումների և հարցազրույցի գործընթացում առաջացող խնդիրների բացահայտման նպատակով:
- **Դաշտային աշխատանքների ընթացքում** իրականացվել են ընթացիկ մշտադիտարկում, տրամաբանական և վիճակագրական ստուգումներ, հետզանգեր, ինչպես նաև հարցազրույցների պատահական հատվածների ձայնագրությունների ստուգում:

Ընդհանուր առմամբ՝ ստուգման է ենթարկվել տվյալների մոտ 10%-ը, իսկ որակի վերահսկման չափանիշներին չհամապատասխանելու պատճառով տվյալների շտեմարանից հեռացվել է 3 հարցազրույց (մանրամասների համար՝ տե՛ս Հավելված 3):

- **Դաշտային աշխատանքների ավարտից հետո** տվյալները մաքրվել և մշակվել են: Այս փուլում ստուգվել են ընտրանքի չափանիշները, բացակայող արժեքները, տրամաբանական անհամապատասխանությունները և տեխնիկական սխալները: Վերջնական տվյալներադարանը պատրաստվել է վիճակագրական վերլուծության համար՝ անանունացվել է, անհրաժեշտության դեպքում իրականացվել են փոփոխականների վերակոդավորումներ ու խմբավորումներ:

2.5 Վերլուծական մոտեցում

Վերլուծությունը կառուցված է հետազոտության հիմնական հարցերի տրամաբանությամբ և համադրում է նկարագրական վիճակագրությունը, և, անհրաժեշտության դեպքում՝ խմբերի միջև համեմատությունները: Նախ ներկայացվում են ընդհանուր բաշխումները, որոնք ցույց են տալիս հարցվածների հիմնական դիրքորոշումները ժողովրդավարության ընկալումների, արժեքների, կառավարման ձևերի և մասնակցության վերաբերյալ, այնուհետև դիտարկվում են տարբեր սոցիալ-ժողովրդագրական խմբերի միջև առկա տարբերությունները:

Խմբերի միջև տարբերությունների մեկնաբանման ժամանակ հաշվի է առնվել վիճակագրական նշանակալիությունը: Այն դեպքերում, երբ տարբերությունները վիճակագրորեն նշանակալի չեն, դրանք չեն մեկնաբանվել որպես հաստատված օրինաչափություններ, այլ ներկայացվել են միայն որպես հնարավոր միտումներ կամ նկարագրական տարբերություններ:

Հետազոտության արդյունքների մեկնաբանման համար ստորև ներկայացված են այն մեթոդաբանական մոտեցումները, որոնք կիրառվել են այս զեկույցում տվյալների հաշվարկման և ներկայացման համար.

Տվյալների մեկնաբանման մեթոդաբանական մոտեցումներ

1. Զեկույցում ներկայացված տոկոսները հաշվարկված են տվյալ հարցին պատասխանածների թվի հիման վրա, եթե այլ բան նշված չէ: Այդ պատճառով առանձին գծապատկերներում կամ աղյուսակներում հարցվածների թիվը կարող է տարբերվել ընդհանուր ընտրանքի չափից (N=1500):
2. Տվյալների ներկայացուցչականությունը ստուգելու նպատակով ընտրանքի հիմնական սոցիալ-ժողովրդագրական ցուցանիշները համադրվել են ազգային վիճակագրական տվյալների հետ[20]: Համադրությունը ցույց է տվել, որ ընտրանքի և բնակչության համապատասխան բաշխումների միջև տարբերությունները փոքր են՝ չգերազանցելով 2.5 տոկոսային կետը[21]: Ուստի տվյալների կշռում չի իրականացվել: Ընտրանքի և բնակչության համակազմն ըստ խմբերի տե՛ս Հավելված 3-ում:
3. Տոկոսները ներկայացված են մեկ տասնորդական ճշգրտությամբ: Կլորացման պատճառով առանձին աղյուսակներում կամ գծապատկերներում տոկոսների գումարը կարող է 0.2-ով տարբերվել 100%-ից:

20. Ընտրանքի և բնակչության սոցիալ-ժողովրդագրական բաշխումների համադրության համար հիմք են ընդունվել ՀՀ վիճակագրական կոմիտեի Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության՝ ILCS 2025 տվյալները:
21. Տարիքային երկու խմբերում արձանագրվել է ընտրանքի և ազգային վիճակագրական տվյալների միջև համեմատաբար ավելի բարձր տարբերություն՝ 4.7, 5.4: Այնուամենայնիվ, հաշվի առնելով հիմնական սոցիալ-ժողովրդագրական բաշխումների ընդհանուր համադրելիությունը և շեղումների սահմանափակ ազդեցությունը ընտրանքի կառուցվածքի վրա, տվյալները չեն կշռվել:

4. «Դժվարանում եմ պատասխանել» (ԴՊ) և «Հրաժարվում եմ պատասխանել» (ՀՊ) տարբերակները ներառվել կամ բացառվել են հաշվարկից՝ կախված տվյալ հարցի վերլուծական նպատակից: Այն դեպքերում, երբ այդ տարբերակները բացառվել են հաշվարկից, նշված է համապատասխան գծապատկերի կամ աղյուսակի տակ:

5. Բազմակի պատասխաններով հարցերի դեպքում հարցվածները կարող էին ընտրել մեկից ավելի պատասխան: Այդ պատճառով նման հարցերի գծապատկերներում ներկայացված տոկոսները ցույց են տալիս յուրաքանչյուր տարբերակն ընտրած հարցվածների մասնաբաժինը, և դրանց գումարը կարող է գերազանցել 100%-ը:

6. Խաչաձև վերլուծություններում դիտարկվել են ժողովրդավարության ընկալումների, արժեքային դիրքորոշումների և մասնակցային վարքագծի տարբերությունները՝ ըստ սեռի, տարիքի, կրթության մակարդակի, բնակավայրի տիպի, մարզի, զբաղվածության կարգավիճակի և տնտեսական վիճակի:

7. Խմբերի միջև տարբերությունների վիճակագրական նշանակալիությունը ստուգվել է խի-քառակուսի թեստի միջոցով: Վերլուծության մեջ վիճակագրորեն նշանակալի են համարվել այն տարբերությունները, որոնց դեպքում նշանակալիության մակարդակը կազմել է $p < 0.05$: Այն դեպքերում, երբ տարբերությունները վիճակագրորեն նշանակալի չեն եղել, դրանք չեն մեկնաբանվել որպես հաստատված օրինաչափություններ:

8. Ընդհանուր ընտրանքի համար սահմանային սխալը կազմում է մոտ ±2.5 տոկոսային կետ՝ 95% վստահության միջակայքում: Առանձին ենթախմբերի համար գնահատականների անորոշությունը կարող է ավելի մեծ լինել՝ կախված տվյալ ենթախմբում հարցվածների թվից:

9. Զեկույցի այն բաժիններում, որտեղ տարբեր հարցեր ներկայացված են ըստ հարցվածների կրթական մակարդակի, կրթության փոփոխականը վերախմբավորվել է երեք կատեգորիայի՝ «միջնակարգ կամ ցածր», «միջին մասնագիտական» և «բարձրագույն կամ բարձր»: «Միջնակարգ կամ ցածր» խմբում ներառվել են տարրական կրթություն չունեցող, տարրական, թերի միջնակարգ և միջնակարգ կրթություն ունեցող հարցվածները: «Միջին մասնագիտական» խմբում ներառվել են միջին մասնագիտական կրթություն ունեցող հարցվածները, իսկ «բարձրագույն կամ բարձր» խմբում՝ թերի բարձրագույն, բարձրագույն և հետբուհական կրթություն ունեցող հարցվածները:

10. Տարիքը խմբավորվել է հետևյալ կատեգորիաներով՝ 18–29, 30–44, 45–59 և 60 և ավելի տարեկաններ: Այս խմբավորումը կիրառվել է տարիքային խմբերի միջև համեմատությունները պարզ և համադրելի ձևով ներկայացնելու նպատակով:

11. Վերլուծության նպատակով կատեգորիկ փոփոխականների միջև կապերը ստուգվել են «խի քառակուսի» թեստի միջոցով: Կապի ուժգնությունը գնահատելու համար հաշվարկվել է նաև Cramer's V գործակիցը:

12. Այն դեպքերում, երբ արձանագրվել է վիճակագրորեն նշանակալի կապ ($p < 0.05$), իրականացվել են post-hoc համեմատություններ՝ պարզելու համար, թե որ խմբերի միջև են առկա տարբերությունները: Զույգային համեմատությունների համար կիրառվել են խի-քառակուսի և երկու համամասնությունների համեմատության թեստեր՝ Holm-ի ճշգրտմամբ:

13. Այն դեպքերում, երբ երկու ժողովրդագրական խմբերի միջև արձանագրվել են վիճակագրորեն նշանակալի տարբերություններ, դրանք ներկայացվել են համապատասխան տողատակերի ծանոթագրություններում՝ նշելով համեմատվող խմբերը և զույգային համեմատության արդյունքը, օրինակ՝ 30–44 vs. 60+, $\chi^2 = 14.44$, $df = 2$, $p.adj < 0.01$:

14. Արդյունքների ներկայացման ժամանակ գծապատկերներում պահպանվել են տվյալ փոփոխականի բոլոր կատեգորիաները, նույնիսկ այն դեպքերում, երբ վիճակագրորեն նշանակալի տարբերություն արձանագրվել է միայն որոշ խմբերի միջև: Օրինակ, եթե տարբերությունը նշանակալի է միայն Երևանի և գյուղական բնակավայրերի միջև, գծապատկերում, միևնույնն է, ներկայացվել են բնակավայրի տիպի բոլոր կատեգորիաները՝ Երևան, այլ քաղաքային և գյուղական: Սա թույլ է տալիս արդյունքները ներկայացնել ամբողջական համատեքստում:
15. Տեքստային մեկնաբանություններում խմբերի միջև տարբերությունների վերաբերյալ պնդումներ կատարվել են միայն այն դեպքերում, երբ post-hoc վերլուծությունը հաստատել է համապատասխան տարբերության վիճակագրական նշանակալիությունը:

2.6 Էթիկական նկատառումներ

Հետազոտությունն իրականացվել է հետազոտական էթիկայի հիմնարար սկզբունքների հետևողական պահպանմամբ՝ առաջնորդվելով ՀՌԿԿ-Հայաստանի ներքին ընթացակարգերով: Մինչև հարցազրույցն սկսելը հարցվողներին ներկայացվել է հետազոտության նպատակը, մասնակցության կամավոր բնույթը և տվյալների գաղտնիության ապահովման սկզբունքները: Այսպիսով, հարցազրույցներն անց են կացվել միայն հարցվողների տեղեկացված համաձայնությամբ: Հարցվողները տեղեկացվել են նաև, որ որակի վերահսկման նպատակով հարցազրույցների պատահական հատվածներ կարող են ձայնագրվել, իսկ ստացված տվյալները վերլուծվել են ընդհանրացված ձևով՝ առանց անձի նույնականացման հնարավորության:

2.7 Սահմանափակումներ

Հետազոտության արդյունքները մեկնաբանելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ մեթոդաբանական սահմանափակումները.

- Քանի որ տվյալները հավաքագրվել են հեռախոսային հարցազրույցների միջոցով, հետազոտությունից կարող էին դուրս մնալ այն անձինք, որոնք չունեն բջջային հեռախոս կամ հասանելի չեն հեռախոսային հարցման միջոցով[22]:
- Հարցման արդյունքները հիմնված են հարցվողների ինքնագնահատականների և հայտարարած դիրքորոշումների վրա, որոնք կարող են որոշ չափով պայմանավորված լինել սոցիալական ցանկալիության գործոնով, այսինքն՝ հարցվողները կարող են տալ հասարակության կողմից ընդունելի համարվող պատասխաններ:
- Առանձին ենթախմբերի վերաբերյալ արդյունքները պետք է մեկնաբանել զգուշությամբ, քանի որ ենթախմբերում հարցվածների թիվը կարող է ավելի փոքր լինել, ինչի հետևանքով մեծանում է գնահատականների անորոշությունը:

22. Ըստ Համաշխարհային բանկի՝ Հեռահաղորդակցության միջազգային միության ցուցանիշների՝ Հայաստանում բջջային կապի բաժանորդագրությունների տարածվածությունը մեկ շնչի հաշվով շատ բարձր է: «ԴեյթաՌեփորթալ» գլոբալ թվային վերլուծական հարթակի 2024 թ.-ի տվյալներով՝ 2024 թ.-ի սկզբին Հայաստանում առկա է եղել շուրջ 4.18 միլիոն ակտիվ բջջային կապ, ինչը համարժեք է երկրի բնակչության 150.4%-ին: Այս ցուցանիշը չի նշանակում, որ բնակչության 150.4%-ն ունի բջջային հեռախոս, քանի որ մեկ անձը կարող է ունենալ մեկից ավելի SIM քարտ կամ բջջային կապի բաժանորդագրություն#: Այնուամենայնիվ, այս տվյալը վկայում է Հայաստանում բջջային կապի լայն տարածվածության մասին:

Բաժին 3.

Հիմնական
արդյունքեր

Ժողովրդավարության վերաբերյալ հանրային պատկերացումները բազմաշերտ են և ներառում են ինչպես քաղաքական, այնպես էլ քաղաքացիական իրավունքներին ու ազատություններին առնչվող տարբեր տարրեր: Վերլուծության համար կարևոր է տարբերակել երկու մակարդակ. մի կողմից՝ այն, թե ինչ հատկանիշներ են մարդիկ վերագրում ժողովրդավարությանը, իսկ մյուս կողմից՝ որքանով են դրանք կապվում Հայաստանի ներկա իրականության հետ: Հետևաբար, վերլուծությունն սկսվում է ժողովրդավարության մասին ընդհանուր ընկալումներից՝ դիտարկելով, թե հարցվածները ինչ հիմնական իմաստներ և ակնկալիքներ են կապում ժողովրդավարության հետ, այնուհետև քննվում է այդ ընկալումների առնչությունը Հայաստանի ներկայիս իրավիճակի և կառավարման նախընտրելի մոդելների հետ:

Արդյունքների մեկնաբանության ընթացքում հարկավոր է տարբերակել ժողովրդավարության ընկալումների երեք փոխկապակցված, սակայն ինքնուրույն մակարդակ՝ ժողովրդավարության նորմատիվ կարևորությունն ու ցանկալիությունը, կոնկրետ ժողովրդավարական ինստիտուտների և սահմանափակումների նկատմամբ վերաբերմունքը, ինչպես նաև փաստացի մասնակցային վարքագիծը: Այս մակարդակներում արձանագրված դիրքորոշումները պարտադիր չէ, որ համընկնեն. ժողովրդավարությանը բարձր աջակցությունը ինքնին չի ենթադրում նույնպիսի աջակցություն բոլոր ժողովրդավարական ինստիտուտներին կամ բարձր փաստացի մասնակցություն:

3.1 Ժողովրդավարության բովանդակությունը հանրային ընկալումներում

Այս բաժնում ներկայացվում են ժողովրդավարության վերաբերյալ հարցվածների հիմնական ընկալումները. ինչ են նրանք հասկանում ժողովրդավարություն ասելով, ինչպես են գնահատում Հայաստանում ազատ արտահայտվելու հնարավորությունը, ինչպիսի վերաբերմունք ունեն ավանդույթների և փոփոխությունների հարաբերակցության նկատմամբ, ինչպես նաև որքանով են ժողովրդավարությունը համարում նախընտրելի կառավարման ձև:

Այս հարցերը փոխկապակցված են, քանի որ ժողովրդավարության մասին պատկերացումները ձևավորվում են ոչ միայն դրա ընդհանուր կամ տեսական ընկալումներից, այլև այն բանից, թե մարդիկ որքանով են այդ սկզբունքները տեսնում իրենց հասարակական և քաղաքական միջավայրում: Այս առումով ժողովրդավարությունը դիտարկվում է ոչ միայն որպես վերացական արժեք, այլ նաև որպես առօրյա փորձառությունների, ազատությունների և կառավարման ձևի վերաբերյալ ընկալումների ամբողջություն:

Ժողովրդավարության հիմնական իմաստավորումները

Ժողովրդավարության մասին պատկերացումների վերլուծությունը սկսվում է այն հարցից, թե ինչ է ժողովրդավարությունը նշանակում հարցվածների համար: Սա կարևոր ելակետ է, քանի որ ժողովրդավարությունը կարող է ընկալվել տարբեր մակարդակներում՝ որպես ընտրությունների միջոցով իշխանության ձևավորման մեխանիզմ, որպես իրավունքների և ազատությունների երաշխիք, ինչպես նաև որպես այնպիսի կառավարման ձև, որի շրջանակում իշխանությունները լսում են քաղաքացիներին և արձագանքում նրանց կարիքներին:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ հարցվածների ընկալումներում ժողովրդավարությունն առավել հաճախ ասոցացվում է ազատ և արդար ընտրությունների (59.3%), օրենքի առջև հավասարության (54.4%) և մարդու իրավունքների պաշտպանության (51.8%) հետ:

Տվյալները նաև հուշում են, որ հարցվածների համար ժողովրդավարությունը բազմաշերտ հասկացություն է, որը ներառում է ոչ միայն ընտրական մեխանիզմներն ու հիմնարար իրավունքների պաշտպանությունը, այլև հաշվետու կառավարումը, ազատությունները և քաղաքացիների բարեկեցությանը միտված պետական քաղաքականությունը: Հարցվածների մոտ կեսը ժողովրդավարությունը կապում է նաև (50.1%) կառավարության՝ քաղաքացիներին լսելու և նրանց կարիքներին արձագանքելու կարողության հետ, 49.3%-ը ժողովրդավարությունը դիտարկում է տնտեսական բարեկեցության և սոցիալական ապահովության համատեքստում, 47.8%-ը՝ խոսքի և մամուլի ազատության, իսկ 46.8%-ը՝ օրենքի գերակայության *(տե՛ս Գծապատկեր 1-ը)*:

Այս արդյունքները համահունչ են ժողովրդավարության բովանդակային ընկալումների մասին այն մոտեցումներին, որոնք ազատ և մրցակցային ընտրություններից զատ շեշտադրում են նաև քաղաքացիական ազատությունները, իրավահավասարությունը, օրենքի գերակայությունը և իշխանությունների հաշվետվողականությունը[23]:

Գծապատկեր 1. Ձեր կարծիքով՝ ընդհանուր առմամբ՝ ի՞նչ է ենթադրում ժողովրդավարությունը (N=1500) (%):



Նշում. Հարցը բազմակի պատասխաններով է: Հարցազրուցավարներն ընթերցել են տարբերակները համակարգի կողմից տրված պատահական հերթականությամբ: Գծապատկերում ներկայացված տոկոսները ցույց են տալիս յուրաքանչյուր պատասխանն ընտրած հարցվածների մասնաբաժինը, ուստի այդ տոկոսները չպետք է գումարել:

Քանի որ հարցվածների զգալի մասը ժողովրդավարությունը կապում է խոսքի ազատության հետ (47.8%), կարևոր է դիտարկել նաև, թե որքանով են այդ ազատությունները ընկալվում որպես գործնականում իրացվող: Այս տեսանկյունից, արտահայտվելու ազատության գնահատականները հնարավորություն են տալիս պատկերացում կազմել ինչպես քաղաքական միջավայրի բաց լինելու, այնպես էլ քաղաքացիների սուբյեկտիվ ընկալումները սեփական կարծիքն ազատորեն արտահայտելու հնարավորությունների մասին:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ներկայիս Հայաստանում ազատ արտահայտվելու հնարավորության վերաբերյալ ընդհանուր պատկերը հիմնականում դրական է. հարցվածների գերակշիռ մասը՝ 76.3%-ը, կարծում է, որ ներկայիս Հայաստանում իրենց նման մարդիկ ունեն իրենց մտածածն ազատորեն արտահայտելու հնարավորություն: Միևնույն ժամանակ, հարցվածների 18.7%-ը նշել է, որ նման հնարավորություն չկա *(տե՛ս Գծապատկեր 2-ը)*:

23. Տե՛ս Dahl, 1971; Diamond, 1999

Գծապատկեր 2. Ի՞նչ եք կարծում՝ ներկայիս Հայաստանում Ձեզ նման մարդիկ ունե՞ն իրենց մտածածն ազատորեն արտահայտելու հնարավորություն (N=1500) (%):



Թեև, ընդհանուր առմամբ, գերակշռում է այն ընկալումը, որ Հայաստանում հնարավոր է ազատորեն արտահայտել սեփական կարծիքը, բայց այդ պատկերը միատեսակ չէ բոլոր սոցիալ-ժողովրդագրական խմբերում: Մասնավորապես, նկատվում են որոշ տարբերություններ՝ պայմանավորված հարցվողների կրթական մակարդակով[24]: Ազատ արտահայտվելու հնարավորության առկայության վերաբերյալ դրական գնահատականներն առավել տարածված են միջնակարգ կամ ավելի ցածր կրթություն (85.0%) և միջին մասնագիտական կրթություն ունեցող հարցվածների շրջանում (82.7%): Համեմատաբար ցածր ցուցանիշ է արձանագրվել բարձրագույն կրթություն ունեցողների շրջանում, որտեղ այդ տեսակետը կիսում է հարցվածների 75.3%-ը[25]:

Տարբերակված պատկեր է ուրվագծվում նաև տարբեր բնակավայրերում ապրող հարցվածների ընկալումներում: Դրական գնահատականները գերակշռում են բոլոր խմբերում, սակայն դրանց արտահայտվածության աստիճանը տարբեր է[26]: Ազատ արտահայտվելու հնարավորության առկայության մասին առավել հաճախ նշել են գյուղական (84.1%) և Երևանից բացի այլ քաղաքային բնակավայրերում ապրող հարցվածները (82.8%), մինչդեռ Երևանում բնակվողների 74.2%-ն է կիսում այդ տեսակետը[27] *(տե՛ս Գծապատկեր 3-ը)*:

Գծապատկեր 3. «Ներկայիս Հայաստանում Ձեզ նման մարդիկ ունե՞ն իրենց մտածածն ազատորեն արտահայտելու հնարավորություն» հարցի պատասխաններն՝ ըստ կրթության մակարդակի և բնակավայրի տիպի (%):



Նշում. «Այո» և «Ոչ» պատասխանների տոկոսները հաշվարկվել են յուրաքանչյուր ենթախմբի ներսում: «ՀՊ» և «ԴՊ» պատասխանները հաշվարկում ներառված չեն, այդ պատճառով գծապատկերում ներկայացված N-ները 1500-ից փոքր են:

24. $\chi^2 = 18.22$, df = 2, N = 1416, $p < 0.001$, Cramer's V = 0.113
25. Բարձրագույն կամ բարձր vs. միջնակարգ կամ ցածր, $\chi^2 = 16.76$, df = 1, p.adj < 0.00
Բարձրագույն կամ բարձր vs. միջին մասնագիտական I, $\chi^2 = 5.86$, df = 1, p.adj < 0.05
26. $\chi^2 = 17.77$, df = 2, N = 1418, $p < 0.001$, Cramer's V = 0.112
27. Գյուղական բնակավայր vs. Երևան, $\chi^2 = 14.52$, df = 1, p.adj < 0.001 | Այլ քաղաքային բնակավայր vs. Երևան, $\chi^2 = 10.16$, df = 1, p.adj < 0.01

Ավանդույթների և փոփոխությունների խաչմերուկում. արժեքային կողմնորոշումներ

Ժողովրդավարության վերաբերյալ հանրային ընկալումների տեսանկյունից կարևոր է դիտարկել նաև հանրության արժեքային դիրքորոշումները՝ հասարակական փոփոխությունների, ավանդույթների և բազմազանության շուրջ: Այս տեսանկյուններից հետազոտության տվյալները վկայում են, որ Հայաստանի ապագայի վերաբերյալ պատկերացումներում ավանդույթներին հավատարիմ մնալու մոտեցումն առավել ընդգծված է. հարցվածների 67.3%-ը կարծում է, որ երկրի ապագայի համար ավելի լավ կլինի հավատարիմ մնալ ավանդույթներին և սովորույթներին: Իսկ ավանդույթների և սովորությունների փոփոխության հանդեպ բաց լինելու դիրքորոշումն ավելի քիչ է տարածված՝ 25.6% (տե՛ս Գծապատկեր 4-ը):

Գծապատկեր 4. Ես կկարդամ երկու պնդում, իսկ Դուք ասացեք, թե դրանցից որն է լավագույնս նկարագրում Ձեր դիրքորոշումը (N=1500) (%):



Ավանդույթների և փոփոխությունների նկատմամբ վերաբերմունքը միատեսակ չէ սոցիալ-ժողովրդագրական տարբեր խմբերում. արդյունքները հուշում են, որ այս հարցում հատկապես կարևոր են տարիքը, կրթությունը և բնակավայրի տիպը[28]: Թեև բոլոր տարիքային խմբերում գերակշռում է ավանդույթներին հավատարիմ մնալու դիրքորոշումը, այն առավել տարածված է 30–44 տարեկանների շրջանում, որտեղ այդ մոտեցումը կիսում է հարցվածների 76.2%-ը: Ավելի երիտասարդ՝ 18–29 տարեկանների շրջանում այս ցուցանիշը կազմում է 65.3%, իսկ 45–59 և 60 և ավելի տարեկանների շրջանում՝ համապատասխանաբար 71.8% և 72.0% (տե՛ս Գծապատկեր 5-ը):

Կրթության մակարդակը ևս որոշակի տարբերակում է առաջացնում հարցվածների ընկալումներում[29]: Փոփոխությունների հանդեպ բաց լինելու դիրքորոշումը համեմատաբար ավելի տարածված է բարձրագույն կրթություն ունեցողների շրջանում (31.0%): Միջին մասնագիտական և միջնակարգ կամ ավելի ցածր կրթություն ունեցողների շրջանում նույն ցուցանիշը կազմում է համապատասխանաբար 24.2% և 25.0% (տե՛ս Գծապատկեր 5-ը):

Պայմանավորված բնակավայրի տիպով պատկերը նույնպես տարբերակելի է, և խմբերի միջև տարբերությունները՝ վիճակագրորեն նշանակալի[30]: Փոփոխությունների հանդեպ բաց լինելու դիրքորոշումն առավել տարածված է Երևանում բնակվողների շրջանում՝ 33.5%, մինչդեռ գյուղաբնակների շրջանում այդ ցուցանիշը 22.9% է:[31] Միաժամանակ, ի տարբե-

28. Բացահայտվել է վիճակագրորեն նշանակալի կապ, պարամետրերը՝ $\chi^2 = 8.41$, df = 3, N = 1386, $p < 0.05$, Cramer's V = 0.078, այսուհետ բոլոր այն դեպքերում, երբ վիճակագրորեն նշանակալի կապ է բացահայտվել, տողատակի նշումով ներկայացված են միայն վիճակագրական թեստի պարամետրերը:
29. $\chi^2 = 6.57$, df = 2, N = 1384, $p < 0.05$, Cramer's V = 0.069
30. $\chi^2 = 14.09$, df = 2, N = 1389, $p < 0.001$, Cramer's V = 0.101
31. Գյուղական բնակավայր vs. Երևան, outcome category = 1, Two-proportion test, statistic = 13.29, df = 1, p.adj < 0.01

ություն երևանաբնակների, ավանդույթներին հավատարիմ մնալու մոտեցումն առավել արտահայտված է գյուղաբնակների շրջանում, որտեղ այն կիսում է հարցվածների 77.1%-ը[32] (տե՛ս Գծապատկեր 5-ը):

Գծապատկեր 5. Ավանդույթներին հավատարիմ մնալու և փոփոխությունների հանդեպ բաց լինելու դիրքորոշումներն՝ ըստ տարիքի, կրթության մակարդակի և բնակավայրի տիպի (%):



Նշում. Տոկոսները հաշվարկվել են յուրաքանչյուր ենթախմբի ներսում: «ԴՊ» և «ՀՊ» պատասխանները ներառված չեն հաշվարկում, այդ պատճառով գծապատկերում ներկայացված N-երը 1500-ից փոքր են:

Թեև ավանդույթների պահպանման և փոփոխությունների նկատմամբ բաց լինելու դիրքորոշումները չեն կարող ուղղակիորեն մեկնաբանվել որպես ժողովրդավարության աջակցության կամ մերժման ցուցիչներ, դրանք կարևոր պատկերացում են տալիս այն արժեքային միջավայրի մասին, որի շրջանակում ձևավորվում են ժողովրդավարության վերաբերյալ հանրային ընկալումները: Այս առումով արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանի ապագայի վերաբերյալ պատկերացումներում առավել տարածված է ավանդույթների պահպանման կողմնորոշումը:

32. Գյուղական բնակավայր vs. Երևան, outcome category = 2, Two-proportion test, statistic = 13.29, df = 1, p.adj < 0.01

Ժողովրդավարությունը որպես նախընտրելի կառավարման ձև

Ժողովրդավարության նկատմամբ վերաբերմունքը մեկնաբանալիս կարևոր է հասկանալ ոչ միայն այն, թե ինչպես են քաղաքացիները սահմանում ժողովրդավարությունը, այլև որքանով են այն համարում որպես նախընտրելի կառավարման ձև: Հետազոտության արդյունքներով՝ ժողովրդավարությունը գերադասելի կառավարման ձև է համարվում հարցվածների 70.7%-ի կողմից՝ ցանկացած այլ իշխանության ձևի համեմատ: Միևնույն ժամանակ, հարցվածների 15.9%-ը նշում է, որ որոշ հանգամանքներում ոչ ժողովրդավարական կառավարումը կարող է նախընտրելի լինել (տե՛ս Գծապատկեր 6-ը):

Գծապատկեր 6. Այս կարծիքներից ո՞րն է առավել մոտ Ձեր տեսակետին (N=1500) (%):



Ժողովրդավարության նկատմամբ վերաբերմունքը, սակայն, միատեսակ չէ սոցիալ-ժողովրդագրական տարբեր խմբերում: Մասնավորապես, ժողովրդավարությունը որպես ցանկացած այլ իշխանությունից գերադասելի ձև համարողների մասնաբաժինը տարիքին զուգահեռ աճում է[33]: 18–29 տարեկանների շրջանում այդ տեսակետը կիսողներն ամենաքիչն են՝ 56.7%, մինչդեռ 30–44 տարեկանների շրջանում այդ ցուցանիշը 72.7% է, 45–59 տարեկանների շրջանում՝ 77.6%, իսկ 60 և ավելի տարեկանների շրջանում՝ 87.0%[34] (տե՛ս Գծապատկեր 7-ը):

Կրթության մակարդակի հետ կապված ևս արձանագրվել են վիճակագրորեն նշանակալի տարբերություններ[35]: Բարձրագույն կրթություն ունեցող հարցվածների 73.0%-ը ժողովրդավարությունը համարում է գերադասելի կառավարման ձև՝ ցանկացած այլ կառավարման համակարգի համեմատ: Միջին մասնագիտական և միջնակարգ կամ ավելի ցածր կրթություն ունեցողների շրջանում այս ցուցանիշը փոքր-ինչ ավելի բարձր է՝ համապատասխանաբար 77.9% և 77.4%: Այս պատկերը հուշում է, որ կրթական խմբերի միջև տարբերությունները ոչ թե ժողովրդավարության նկատմամբ ընդհանուր մերժման, այլ կառավարման նախընտրելի ձևերի վերաբերյալ ավելի տարբերակված դիրքորոշումների մակարդակում են արտահայտվում (տե՛ս Գծապատկեր 7-ը):

Վիճակագրորեն նշանակալի տարբերություններ են դիտվում նաև զբաղվածության կարգավիճակի հիմքով[36]: Ժողովրդավարությունը որպես նախընտրելի կառավարման ձև առավել հաճախ նշել են թոշակառուները (87.9%), մինչդեռ ուսանողների շրջանում այդ ցուցանիշը զգալիորեն ավելի ցածր է (45.7%)[37] (տե՛ս Գծապատկեր 7-ը):

33. χ^2 = 72.98, df = 6, N = 1393, p < 0.001, Cramer's V = 0.162
34. 18-29 vs. 60+, χ^2 = 71.83, df = 2, p.adj < 0.001
18-29 vs. 45-59, χ^2 = 26.27, df = 2, p.adj < 0.001
18-29 vs. 30-44, χ^2 = 17.43, df = 2, p.adj < 0.001
35. χ^2 = 14.79, df = 4, N = 1393, p < 0.01, Cramer's V = 0.073
36. χ^2 = 43.32, df = 12, N = 1381, p < 0.001,Cramer's V = 0.125
37. Թոշակառու vs. Ուսանող, outcome category = 1, Two-proportion test, statistic = 36.07, df = 1, p.adj < 0.001

Գծապատկեր 7. Տեսակետին առավել մոտ կարծիքներն՝ ըստ տարիքի, կրթության և զբաղվածության (%):



Նշում. Տոկոսները հաշվարկվել են յուրաքանչյուր ենթախմբի ներսում: «ԴՊ» և «ՀՊ» պատասխանները ներառված չեն հաշվարկում, այդ պատճառով գծապատկերում ներկայացված N-երը 1500-ից փոքր են:

Վերոնշյալ արդյունքները ցույց են տալիս, որ ժողովրդավարության մասին հանրային պատկերացումները միատեսակ չեն սոցիալ-ժողովրդագրական բոլոր խմբերում: Տարբերությունները հատկապես նկատելի են ժողովրդավարությունը որպես նախընտրելի կառավարման ձև դիտարկելու, ազատ արտահայտվելու հնարավորության, ինչպես նաև ավանդույթների և փոփոխությունների նկատմամբ վերաբերմունքի մասին հարցերում: Հետազոտության արդյունքներից կարելի է նաև եզրահանգել, որ ընդհանուր առմամբ, ժողովրդավարության ընկալումների տարբերություններն առավել տեսանելի են երեք առանցքով՝ տարիք, կրթութ-

յուն և բնակավայր: Երիտասարդների շրջանում նկատվում է ավելի տարբերակված վերաբերմունք ժողովրդավարության նախընտրելիության նկատմամբ, բարձրագույն կրթություն ունեցողների և երևանաբնակների շրջանում՝ փոփոխությունների հանդեպ ավելի բաց դիրքորոշում, իսկ գյուղական բնակավայրերում և ավագ տարիքային խմբերում՝ ավանդույթների և ժողովրդավարության նկատմամբ ավելի բարձր աջակցություն:

3.2 Ժողովրդավարական երկրի հատկանիշները հանրային պատկերացումներում

Այս բաժնում դիտարկվում են ժողովրդավարության նկատմամբ ընդհանուր վերաբերմունքը, ինչպես նաև արժեքային և ինստիտուցիոնալ նախապատվությունները, որոնց միջոցով հարցվածները պատկերացնում են ժողովրդավարական երկիրը: Վերլուծությունը ներառում է ժողովրդավարական երկրի ցանկալի հատկանիշները, կառավարման տարբեր մոդելների նկատմամբ վերաբերմունքը, ժողովրդավարական սկզբունքների ընկալումը, ինչպես նաև քաղաքացիների ազդեցության և իշխանությունների հաշվետվողականության վերաբերյալ դիրքորոշումները:

Ժողովրդավարական երկրի մասին պատկերացումները չեն սահմանափակվում միայն ժողովրդավարությունը որպես կառավարման ձև նախընտրելու հարցով: Դրանք նաև արտացոլում են, թե ինչպիսի պայմաններ են հարցվածները կարևորում անվտանգ, արժանապատիվ և մասնակցային հասարակությունում ապրելու համար:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ժողովրդավարական երկրի վերաբերյալ պատկերացումներում գերակշռում է կայուն, կարգավորված և արդար միջավայրում ապրելու պահանջը: Դիտարկված հատկանիշների մեծ մասը կարևոր է համարվել հարցվածների ճնշող մեծամասնության կողմից, ինչը վկայում է, որ ժողովրդավարությունը հանրային ընկալումներում ներկայանում է ոչ միայն որպես քաղաքական կառավարման եղանակ, այլև որպես հասարակական կյանքի կազմակերպման ավելի լայն համակարգ: Այդ համակարգում միաժամանակ կարևորվում են կարգուկանոնը, անկախ դատական համակարգը, քաղաքացիների մասնակցությունը որոշումների կայացմանը, խոսքի և այլակարծության ազատությունը, ինչպես նաև ազատ մամուլի առկայությունը:

Դիտարկված հատկանիշներից ամենաբարձր կարևորությունը տրվել է կարգուկանոնին. հարցվածների 98.3%-ը նշել է, որ իրենց համար ավելի շուտ կարևոր է ապրել այնպիսի երկրում, որտեղ *ապահովվում է կարգուկանոնը*: Այս ցուցանիշը ցույց է տալիս, որ ժողովրդավարության մասին հանրային պատկերացումներում անվտանգությունն ու կանխատեսելի հասարակական միջավայրը կենտրոնական տեղ ունեն: Բարձր կարևորություն է տրվել նաև ազատ և անկախ դատական համակարգին՝ 93.2%, ինչպես նաև այն հանգամանքին, որ *քաղաքացիները ձայն ունենան իրենց համայնքի և երկրի վրա ազդող որոշումների կայացման գործընթացում՝* 92.3% (տե՛ս Գծապատկեր 8-ը):

Ժողովրդավարական կառավարման ձևն ինքնին նույնպես բարձր կարևորություն ունի հարցվածների համար. 90.3%-ը կարևոր է համարել *ժողովրդավարական եղանակով կառավարվող երկրում ապրելը*: Միևնույն ժամանակ, 88.3%-ը կարևոր է համարել այնպիսի միջավայրը, *որտեղ մարդիկ կարող են ազատորեն բողոք արտահայտել և դրսևորել այլակարծություն*: Համեմատաբար ավելի ցածր, սակայն դեռևս մեծամասնության մակարդակում, կարևորություն է տրվել *ազատ մամուլի* առկայությանը. այս տարբերակը կարևոր է համարել հարցվածների 79.4%-ը (տե՛ս Գծապատկեր 8-ը):

Գծապատկեր 8. Գնահատեք, թե որքանով է կարևոր ապրել մի երկրում, ... (N=1500) (%)



Թեև ժողովրդավարական եղանակով կառավարվող երկրում ապրելը կարևոր է հարցվածների մեծամասնության համար, այդ կարևորության ընկալումը որոշ չափով տարբերվում է սոցիալ-ժողովրդագրական խմբերի միջև: Մասնավորապես, տարիքային խմբերի միջև տարբերությունները վիճակագրորեն նշանակալի են[38]: Ժողովրդավար եղանակով կառավարվող երկրում ապրելը կարևոր համարողների մասնաբաժինը 18–29 տարեկանների շրջանում կազմում է 85.1%, 30–44 տարեկանների շրջանում՝ 92.3%, 45–59 տարեկանների շրջանում՝ 92.9%, իսկ 60 և ավելի տարեկանների շրջանում՝ 95.3% (տե՛ս Գծապատկեր 9):

Կրթության մակարդակի կտրվածքով ևս դիտվում են վիճակագրորեն նշանակալի տարբերություններ[39]: Բարձրագույն կրթություն ունեցողների շրջանում ժողովրդավարական կառավարման կարևորությունը նշողների մասնաբաժինը կազմում է 89.9%, իսկ միջին մասնագիտական և միջնակարգ կամ ավելի ցածր կրթություն ունեցողների շրջանում այդ ցուցանիշը համապատասխանաբար 94.4% և 94.2% է[40] (տե՛ս Գծապատկեր 9):

38. $\chi^2 = 27.11$, df = 6, N = 1459, $p < 0.001$, Cramer's V = 0.096
39. $\chi^2 = 11.65$, df = 4, N = 1459, $p < 0.05$,Cramer's V = 0.063
40. Բարձրագույն կամ բարձր vs. միջնակարգ կամ ցածր, $\chi^2 = 8.67$, df = 2, p.adj < 0.05

Գծապատկեր 9. Ժողովրդավար եղանակով կառավարվող երկրում ապրելու կարևորության ընկալումը՝ ըստ տարիքի և կրթության մակարդակի (%):



Նշում. Տոկոսները հաշվարկվել են յուրաքանչյուր ենթախմբերի ներսում: «ԴՊ» և «ՀՊ» պատասխանները ներառված չեն հաշվարկում, այդ պատճառով գծապատկերում ներկայացված N-երը 1500-ից փոքր են:

Ազատ մամուլի կարևորության գնահատման հարցում ևս նկատվում են տարիքային տարբերություններ[41]: Կարևորությունն առավել ցածր է գնահատվել 18–29 տարեկանների շրջանում (70.6%), մինչդեռ 30–44, 45–59 և 60 և ավելի տարեկանների շրջանում այն կարևոր է համարել համապատասխանաբար 81.6%, 83.4% և 86.8%-ը[42] (տե՛ս Գծապատկեր 10-ը):

Գծապատկեր 10. Ազատ մամուլ ունեցող երկրում ապրելու կարևորության ընկալումն՝ ըստ տարիքի (N=1444) (%):



Նշում. Տոկոսները հաշվարկվել են յուրաքանչյուր ենթախմբի ներսում: «ԴՊ» և «ՀՊ» պատասխանները ներառված չեն հաշվարկում, այդ պատճառով գծապատկերում ներկայացված N-ը 1500-ից փոքր է:

41. $\chi^2 = 28.03$, df = 6, N = 1444, $p < 0.001$, Cramer's V = 0.099
42. 18-29 vs. 60+, $\chi^2 = 25.23$, df = 2, p.adj < 0.001
18-29 vs. 45-59, $\chi^2 = 14.06$, df = 2, p.adj < 0.01
18-29 vs. 30-44, $\chi^2 = 11.45$, df = 2, p.adj < 0.05

Քաղաքացիների՝ համայնքի և երկրի վրա ազդող որոշումների կայացման գործում ձայն ունենալու կարևորության գնահատման հարցում տարբեր տարիքային խմբերի միջև արձանագրվել են վիճակագրորեն նշանակալի տարբերություններ[43]. եթե 18-29 տարեկանների դեպքում 87.1%-ն է կարևոր համարում քաղաքացիների մասնակցությունը որոշումների կայացմանը, ապա 60 և ավելի տարեկանների շրջանում՝ 97.4%[44] (տե՛ս Գծապատկեր 11-ը):

Նման տարբերություններ են դիտվում նաև՝ ըստ հարցվածների սեռի[45]: Կանանց 95.0%-ը կարևոր է համարում քաղաքացիների մասնակցությունը որոշումների կայացմանը, մինչդեռ տղամարդկանց շրջանում այդ ցուցանիշը կազմում է 92.1%[46] (տե՛ս Գծապատկեր 11-ը):

Գծապատկեր 11. Համայնքի և երկրի վրա ազդող որոշումների կայացման գործում քաղաքացիների ձայն ունենալու կարևորության ընկալումն՝ ըստ տարիքի և սեռի (%):



Նշում. Տոկոսները հաշվարկվել են յուրաքանչյուր ենթախմբերի ներսում: «ԴՊ» և «ՀՊ» պատասխանները ներառված չեն հաշվարկում, այդ պատճառով գծապատկերում ներկայացված N-երը 1500-ից փոքր են:

Կառավարման ձևերի նկատմամբ վերաբերմունքը

Հայաստանի կառավարման ձևերին վերաբերող պնդումների նկատմամբ դիրքորոշումները ցույց են տալիս, որ հարցվածների պատկերացումներում միաժամանակ տեղ են զբաղեցնում թե՛ ուժեղ առաջնորդության, թե՛ ժողովրդավարական ինստիտուտների կարևորության մասին ընկալումները: Այս համադրությունը վկայում է, որ հանրային պատկերացումները կառավարման նախընտրելի մոդելների վերաբերյալ միանշանակ չեն և հաճախ ներառում են տարբեր, երբեմն նույնիսկ իրար հակասող մոտեցումներ:

Ամենաբարձր համաձայնությունը գրանցվել է «ուժեղ առաջնորդ ունենալու» պնդման դեպքում. հարցվածների 92.9%-ն ավելի շուտ համաձայն է այս պնդման հետ: Այս արդյունքները ցույց են տալիս, որ հանրային ընկալումներում ուժեղ առաջնորդ ունենալու դերը կարևոր տեղ է զբաղեցնում: Մյուս կողմից ուշագրավ է, որ քաղաքացիների մեծ մասը (73.9%) համաձայնել են այն պնդման հետ, որ իրենք ունակ են ընտրելու լավ ղեկավար (տե՛ս Գծապատկեր 12-ը):

43. $\chi^2 = 31.99$, df = 6, N = 1469, $p < 0.001$, Cramer's V = 0.104
44. 18-29 vs. 60+, $\chi^2 = 28.77$, df = 2, p.adj < 0.001
18-29 vs. 45-59, $\chi^2 = 11.78$, df = 2, p.adj < 0.05
45. $\chi^2 = 9.19$, df = 2, N = 1478, $p < 0.05$, Cramer's V = 0.079
46. Իգական vs. Արական, $\chi^2 = 9.19$, df = 2, p.adj < 0.05

Միևնույն ժամանակ, ինչպես երևում է Գծապատկեր 12-ից հարցվածների 60.1%-ն ավելի շուտ համաձայն է այն պնդման հետ, որ երկիրը պետք է ունենա Ազգային ժողովից և դատական համակարգից անկախ[47] առաջնորդ: Կրոնական ինստիտուտների քաղաքական դերակատարության հարցում հանրային դիրքորոշումները միանշանակ չեն: Եկեղեցու՝ Հայաստանի խորհրդարանում ներկայացուցիչ ունենալու վերաբերյալ պնդման դեպքում հարցվածների 48.3%-ն ավելի շուտ համաձայն է, իսկ 40.5%-ն ավելի շուտ համաձայն չէ (տե՛ս Գծապատկեր 12-ը):

Առավել բազմազան և երբեմն հակասական են այն պնդումների շուրջ ձևավորված դիրքորոշումները, որոնք վերաբերում են ոչ դասական կամ ոչ լիովին ժողովրդավարական կառավարման ձևերին: Օրինակ՝ բանակի կողմից կառավարման վերաբերյալ պնդման հետ հարցվածների 54.7%-ն ավելի շուտ համաձայն չէ, մինչդեռ 32.1%-ն ավելի շուտ համաձայն է: Նմանապես, այն պնդման դեպքում, որ ժողովրդավարության վտանգման պայմաններում ընդունելի է այն պաշտպանել հակաժողովրդավարական մեթոդներով, պատասխանները գրեթե հավասարապես են բաշխված. 42.2%-ն ավելի շուտ համաձայն է, իսկ 40.7%-ն ավելի շուտ համաձայն չէ (տե՛ս Գծապատկեր 12-ը):

Գծապատկեր 12. Խնդրում եմ նշեք, թե որքանով եք համաձայն Հայաստանի կառավարման ձևերին վերաբերող հետևյալ պնդումներից յուրաքանչյուրի հետ (N=1500) (%):



47. Անկախ բառն օգտագործվում է որոշակի սահմանափակ կոնտեքստում և նկատի է առնվում օրենսդիր կամ դատական մարմինների լիազորությունների անտեսումը, հաշվետու լինելու հանգամանքի շրջանցումը:

Ուշագրավ է, որ մարդու իրավունքների պաշտպանությունը ժողովրդավարության կարևոր հատկանիշ չհամարողների կեսից ավելին (54.4%) համաձայնել է, որ ժողովրդավարության վտանգման պայմաններում ընդունելի է այն պաշտպանել հակաժողովրդավարական մեթոդներով: Իսկ, մարդու իրավունքների պաշտպանությունը ժողովրդավարության կարևոր հատկանիշ համարողների 51.7%-ն էլ չի համաձայել նույն պնդման հետ[48]: Այսինքն, ըստ էության, երկու խմբում էլ հարցվածների մոտավորապես կեսը, անկախ այն հանգամանքից, թե մարդու իրավունքների պաշտպանությունը դիտարկում է որպես ժողովրդավարության կարևոր հատկանիշ, թե՝ ոչ, ընդունելի է համարում ժողովրդավարության վտանգման պայմաններում այն հակաժողովրդավարական մեթոդներով պաշտպանելը (տե՛ս Աղյուսակ 2-ը):

Աղյուսակ 2. Ժողովրդավարության վտանգման դեպքում հակաժողովրդավարական մեթոդների ընդունելիությունը՝ ըստ մարդու իրավունքների պաշտպանությունը որպես ժողովրդավարության կարևոր հատկանիշ ընկալելու

		Մարդու իրավունքների պաշտպանություն՝ որպես ժողովրդավարության կարևոր հատկանիշ	
		Ոչ	Այո
Եթե ժողովրդավարությունը վտանգված է, ապա ընդունելի է այն պաշտպանել հակաժողովրդավարական մեթոդներով:	Ավելի շուտ համաձայն չեմ	37.7%	51.7%
	Ոչ համաձայն եմ, ոչ էլ անհամաձայն	8.0%	8.8%
	Ավելի շուտ համաձայն եմ	54.4%	39.5%
Ընդամենը		100.0%	100.0%

Ինչպես արդեն նշվեց, ուժեղ առաջնորդության պահանջը հարցվածների շրջանում բավականին բարձր է (92.9%) դրան զուգահեռ հարցվածների 60.1%-ը համաձայն է, որ երկիրը պետք է ունենա Ազգային ժողովից և դատական համակարգից անկախ առաջնորդ: Հետաքրքիր է, որ հարցվածների մեծամասնությունը միաժամանակ աջակցում է ուժեղ առաջնորդ ունենալու և Ազգային ժողովից ու դատական համակարգից անկախ առաջնորդ ունենալու գաղափարներին (64.1%): Միևնույն ժամանակ, հարցվածների 23.2%-ը համաձայն է ուժեղ առաջնորդ ունենալու պնդմանը և համաձայն չէ ԱԺ-ից և դատական համակարգից անկախ առաջնորդի գաղափարին[49] (տե՛ս աղյուսակ 3-ը):

48. $\chi^2 = 31.2$, df = 2, N = 1328, p < 0,001, Cramer's V = 0.152
49. . $\chi^2 = 9.6$, df = 4, N = 1357, p = 0,048, Cramer's V = 0.104

Աղյուսակ 3. Ուժեղ առաջնորդ ունենալու ցանկության և ինստիտուցիոնալ վերահսկողությունից անկախ առաջնորդության վերաբերյալ դիրքորոշումների համադրությունը:

		Ունենալ Ազգային ժողովից, դատական համակարգից անկախ առաջնորդ			Ընդամենը
		Ավելի շուտ համաձայն չեմ	Ոչ համաձայն եմ, ոչ էլ անհամաձայն	Ավելի շուտ համաձայն եմ	
Ունենալ ուժեղ առաջնորդ	Ավելի շուտ համաձայն չեմ	1.1%		1.5%	2.6%
	Ոչ համաձայն եմ, ոչ էլ անհամաձայն	.4%	.3%	1.0%	1.7%
	Ավելի շուտ համաձայն եմ	**23.2%**	**8.5%**	**64.1%**	**95.8%**
Ընդամենը		24.6%	8.8%	66.6%	100.0%

Ազգային ժողովից, դատական համակարգից անկախ առաջնորդ ունենալու մասին հարցում հարցվածների պատկերացումները տարբերվում են ըստ տարիքային խմբերի[50]: Ազգային ժողովից և դատական համակարգից անկախ առաջնորդ ունենալու գաղափարին համաձայնողների մասնաբաժինը տարիքին զուգահեռ աճում է՝ 18–29 տարեկանների շրջանում կազմելով 58.7%, 30–44 տարեկանների շրջանում՝ 64.3%, 45–59 տարեկանների շրջանում՝ 66.9%, իսկ 60 և ավելի տարեկանների շրջանում՝ 72.9% (տե՛ս Գծապատկեր 13-ը):

Գծապատկեր 13. Ազգային ժողովից և դատական համակարգից անկախ առաջնորդ ունենալու գաղափարի նկատմամբ համաձայնությունն՝ ըստ տարիքի (N=1351) (%):



Նշում. Տոկոսները հաշվարկվել են յուրաքանչյուր ենթախմբի ներսում: «ԴՊ» և «ՀՊ» պատասխանները ներառված չեն հաշվարկում, այդ պատճառով գծապատկերում ներկայացված N-ը 1500-ից փոքր է:

50. . $\chi^2 = 24.92$, df = 6, N = 1351, $p < 0.001$, Cramer's V = 0.096

Բանակի քաղաքական դերակատարության վերաբերյալ վերաբերմունքները նույնպես որոշ չափով տարբերվում են ըստ տարիքի[51]: Բանակի կողմից կառավարման գաղափարին աջակցությունն առավել բարձր է 45–59 տարեկանների շրջանում (37.7%), իսկ ամենացածրը՝ 18–29 տարեկանների շրջանում (30.5%)[52] (տե՛ս Գծապատկեր 14-ը):

Գծապատկեր 14. Բանակի կողմից Հայաստանի մասամբ կամ ամբողջությամբ կառավարման գաղափարի նկատմամբ համաձայնությունն՝ ըստ տարիքի (N=1402) (%):



Նշում. Տոկոսները հաշվարկվել են յուրաքանչյուր ենթախմբի ներսում: «ԴՊ» և «ՀՊ» պատասխանները ներառված չեն հաշվարկում, այդ պատճառով գծապատկերում ներկայացված N-ը 1500-ից փոքր է:

Կրթական մակարդակից կախված էլ կարծիքների տարբերություն է նկատվում պատերազմի կամ ռազմական սպառնալիքի պայմաններում մամուլի ազատության սահմանափակման արդարացվածության նկատմամբ համաձայնությանը վերաբերող հարցվածների պատասխաններում[53]: Բարձրագույն կրթություն ունեցողների 79.0%-ը համաձայն է այս տեսակետի հետ, միջին մասնագիտական կրթություն ունեցողների շրջանում այդ ցուցանիշը կազմում է 65.9%, իսկ միջնակարգ կամ ավելի ցածր կրթություն ունեցողների շրջանում՝ 67.0%: (տե՛ս Գծապատկեր 15-ը):

Գծապատկեր 15. Պատերազմի կամ ռազմական սպառնալիքի պայմաններում մամուլի ազատության սահմանափակման արդարացվածության նկատմամբ համաձայնությունն՝ ըստ կրթության մակարդակի (N=1424) (%):



Նշում. Տոկոսները հաշվարկվել են յուրաքանչյուր ենթախմբի ներսում: «ԴՊ» և «ՀՊ» պատասխանները ներառված չեն հաշվարկում, այդ պատճառով գծապատկերում ներկայացված N-ը 1500-ից փոքր է:

51. $\chi^2 = 16.86$, df = 6, N = 1402, $p < 0.01$, Cramer's V = 0.078
52. 18-29 vs. 45-59, $\chi^2 = 11.77$, df = 2, p.adj < 0.05
53. $p < 0.001$, $\chi^2 = 27.79$, df = 4, N = 1424, Cramer's V = 0.099

Ժողովրդավարությունը հակաժողովրդավարական մեթոդներով պաշտպանելու ընդունելիության նկատմամբ համաձայնության հարցում ևս տարիքային տարբերությունները նշանակալի են[54]: Նման մոտեցման նկատմամբ համաձայնությունն առավել բարձր է 30–44 տարեկանների շրջանում (51.0%), իսկ ամենացածրը՝ 60 և ավելի տարեկանների շրջանում (42.8%)[55] (տե՛ս Գծապատկեր 16-ը):

Գծապատկեր 16. Ժողովրդավարությունը հակաժողովրդավարական մեթոդներով պաշտպանելու ընդունելիության նկատմամբ համաձայնությունն՝ ըստ տարիքի (N=1350) (%):



Նշում. Տոկոսները հաշվարկվել են յուրաքանչյուր ենթախմբի ներսում: «ԴՊ» և «ՉՊ» պատասխանները ներառված չեն հաշվարկում, այդ պատճառով գծապատկերում ներկայացված N-ը 1500-ից փոքր է:

Կառավարման մոդելների վերաբերյալ դիրքորոշումները ցույց են տալիս, որ ուժեղ առաջնորդ ունենալը պահանջը հարցվածների ընկալումներում բավականին ընդգծված է: Սակայն ժողովրդավարական մշակույթի գնահատման համար կարևոր է դիտարկել նաև ավելի կոնկրետ սկզբունքների նկատմամբ վերաբերմունքը՝ բազմակարծության պաշտպանությունը, սահմանադրականությունը, հանրային բողոքի իրավունքը, պաշտոնական դիրքի օգտագործումը և օրենքի գերակայությունը:

Ժողովրդավարական սկզբունքները հանրային ընկալումներում

Պետության և ժողովրդավարական կառավարման գործընթացների վերաբերյալ պնդումների նկատմամբ դիրքորոշումները ցույց են տալիս, որ հարցվածների շրջանում առկա են ինչպես ժողովրդավարական սկզբունքներին աջակցող, այնպես էլ որոշ հարցերում հակասական մոտեցումներ:

Այսպես՝ հարցվածների 52.3%-ն ավելի շուտ համաձայն է այն պնդման հետ, որ կառավարությունը բավարար չափով պաշտպանում է բազմակարծությունը, մինչդեռ 32.5%-ն ավելի շուտ համաձայն չէ այդ դատողության հետ (տե՛ս Գծապատկեր 17-ը):

Գծապատկեր 17-ը ցույց է տալիս նաև, որ կառավարության՝ Սահմանադրությամբ առաջնորդվելու վերաբերյալ պատասխաններում հարցվածների 42.8%-ն ավելի շուտ համաձայն չէ այս պնդման հետ, իսկ 35.3%-ն ավելի շուտ համաձայն է:

Հանրային հավաքների կամ բողոքի գործողությունների սահմանափակման վերաբերյալ ևս նկատվում է բաժանված պատկեր. հարցվածների 45.6%-ն ավելի շուտ համաձայն է այն

54. χ^2 = 28.88, df = 6, N = 1350, p < 0.001, Cramer's V = 0.103
55. 30-44 vs. 60+, outcome category = 1, Two-proportion test, statistic = 17.34, df = 1, p.adj < 0.001

մոտեցման հետ, որ կառավարությունը կարող է զսպել նման գործողությունները՝ բռնության կամ անկայունության ռիսկերի պատճառով, իսկ 40.5%-ն ավելի շուտ համաձայն չէ: Այս տվյալը ցույց է տալիս, որ հանրային կարգի պահպանման հարցը որոշ դեպքերում կարող է դիտարկվել որպես քաղաքացիական ազատությունների սահմանափակման հիմնավորում (տե՛ս Գծապատկեր 17-ը):

Հարցվածների գերակշիռ մասը չի ընդունում պաշտոնեական դիրքի օգտագործումը անձնական կապերի օգտին, քանի որ մերժողական դիրքորոշում է գրանցվել այն պնդման նկատմամբ, որ նորմալ է պետական պաշտոն ունեցող անձի կողմից հարազատներին կամ ընկերներին օգնելը. հարցվածների 63.7%-ն ավելի շուտ համաձայն չէ այս պնդման հետ, մինչդեռ 25.2%-ն ավելի շուտ համաձայն է: Միևնույն ժամանակ, բավականին հակասական պատկեր է արձանագրվել օրենքի խախտման վերաբերյալ այն պնդման դեպքում, ըստ որի՝ ընդունելի է, որ նախընտրած քաղաքական գործիչը խախտի օրենքը, եթե դա բխում է երկրի շահերից: Այս պնդման հետ ավելի շուտ համաձայն է հարցվածների 47.2%-ը, իսկ 41.1%-ն ավելի շուտ համաձայն չէ (տե՛ս Գծապատկեր 17-ը):

Գծապատկեր 17. Այժմ կկարդամ մի քանի դատողություն, իսկ Դուք ասացեք, թե որքանով եք համաձայն դրանցից յուրաքանչյուրի հետ (N=1500) (%):



Ընդհանուր առմամբ, տվյալները ցույց են տալիս, որ ժողովրդավարական կառավարման վերաբերյալ հանրային ընկալումները միանշանակ չեն: Մի կողմից, հարցվածների զգալի մասը կարևորում է բազմակարծությունը, մյուս կողմից համաձայնում է հանրային գործողությունների սահմանափակմանը վերաբերող պնդման հետ: Մի դեպքում մերժում

է պաշտոնական դիրքի օգտագործումը անձնական և այլ կապերի համար, այլ դեպքում հետնահանջ դիրքորոշում է որդեգրում օրենքի կառավարության սահմանադրականության, և օրենքի գերակայության վերաբերյալ պնդումների հետ կապված:

Քաղաքացիների ազդեցության և իշխանությունների հաշվետվողականության վերաբերյալ ընկալումները ժողովրդավարական լեգիտիմության կարևոր բաղադրիչներ են: Քաղաքական համակարգին աջակցությունը կարող է արտահայտվել տարբեր մակարդակներում՝ ժողովրդավարության ընդհանուր սկզբունքների ընդունումից մինչև կոնկրետ ինստիտուտների և իշխանությունների նկատմամբ վստահություն[56]: Հետխորհրդային հասարակությունների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քաղաքական վստահությունը ձևավորվում է ինչպես մշակութային գործոնների, այնպես էլ ինստիտուտների աշխատանքի գնահատման հիման վրա[57]: Այս պատճառով քաղաքացիների՝ կառավարման վրա ազդեցություն ունենալու, իշխանությունների հաշվետվողականության և ընտրությունների միջոցով իշխանություն փոխելու վերաբերյալ ընկալումները կարևոր են հասկանալու համար, թե որքանով է ժողովրդավարությունը ընկալվում որպես գործնականում գործող համակարգ, և ոչ թե զուտ որպես ցանկալի արժեք:

Քաղաքացիների ազդեցության, իշխանությունների հաշվետվողականության և ընտրություններին մասնակցության վերաբերյալ պատասխանները ցույց են տալիս, որ հարցվածների շրջանում ընդհանուր առմամբ գերակշռում են դրական դիրքորոշումները: Տվյալները վկայում են, որ հարցվածների մեծ մասը քաղաքացիների քաղաքական ներգրավվածությունն ու ընտրական մասնակցությունը դիտարկում է որպես ժողովրդավարական կառավարման կարևոր բաղադրիչներ, միաժամանակ համեմատության մեջ բավականին դրական է գնահատում նաև իշխանությունների հաշվետվողականությունը:

Ամենաբարձր համաձայնությունը գրանցվել է ընտրություններին մասնակցելու վերաբերյալ պնդման դեպքում. հարցվածների 95.9%-ն ավելի շուտ համաձայն է, որ ընտրություններին մասնակցելը յուրաքանչյուր քաղաքացու քաղաքական պարտականությունն է[58]: Այս ցուցանիշը թույլ է տալիս կարծել, որ ընտրական մասնակցությունը հարցվածների մեծամասնության կողմից ընկալվում է ոչ միայն որպես իրավունք, այլև որպես քաղաքացիական պատասխանատվություն (տե՛ս Գծապատկեր 18-ը): Միևնույն ժամանակ, Ազգային ժողովի նախորդ՝ 2021 թ.-ի և վերջին՝ 2026 թ.-ի ընտրություններում ընտրողների ցածր մասնակցությունը (համապատասխանաբար 49.3% և 58.9%)[59] ցույց է տալիս, որ թեև ընտրություններին մասնակցությունը կարող է ընկալվել որպես քաղաքացիական պարտականություն կամ պատասխանատվություն, գործնականում այդ գիտակցումը չի համապատասխանում իրական մասնակցության մակարդակին:

Գծապատկեր 18-ը ցույց է տալիս, որ բարձր է նաև այն պնդման հետ համաձայնությունը, որ ժողովրդավարության պայմաններում քաղաքացին կարող է ազդեցություն ունենալ երկրի կառավարման վրա. այս տեսակետին ավելի շուտ համաձայն է հարցվածների 84.7%-ը, մինչդեռ 10.1%-ն ավելի շուտ համաձայն չէ:

Հաշվետվողականության վերաբերյալ պնդումների դեպքում ևս գերակշռում են դրական գնահատականները: Հարցվածների 72.5%-ն ավելի շուտ համաձայն է, որ Հայաստանի կենտրոնական իշխանությունները հաշվետու են քաղաքացիների առջև իրենց ընդունած որոշումների համար, իսկ 77.3%-ը նույն կերպ է գնահատում տեղական իշխանությունների հաշվետվողականությունը: Միևնույն ժամանակ, կենտրոնական իշխանությունների

56. Տե՛ս Easton, 1965, 1975
57. Տե՛ս Mishler & Rose, 2001
58. Այս արդյունքը վերաբերում է մասնակցության նորմատիվ կարևորության ընկալմանը և ինքնին չի վկայում փաստացի մասնակցային վարքագծի մասին:
59. Տե՛ս https://www.elections.am/Elections/Parliamentary, դիտված է 25.06.2026

հաշվետվողականության հետ ավելի շուտ համաձայն չէ հարցվածների 18.5%-ը, իսկ տեղական իշխանությունների դեպքում՝ 13.5%-ը (տե՛ս Գծապատկեր 18-ը):

Գծապատկեր 18. Այժմ կրկին կկարդամ մի քանի պնդում, իսկ Դուք ասացեք, թե որքանով եք համաձայն դրանցից յուրաքանչյուրի հետ (N=1500) (%):



Ընդհանուր առմամբ, տվյալները ցույց են տալիս, որ հարցվածների շրջանում բավականին բարձր է թե՛ ընտրություններին մասնակցության կարևորության, թե՛ քաղաքացիների քաղաքական ազդեցության հնարավորության ընկալումը: Միաժամանակ, իշխանությունների հաշվետվողականության վերաբերյալ դրական գնահատականները նույնպես գերակշռում են, թեև այս հարցում առկա է նաև համեմատաբար ավելի քննադատական դիրքորոշում ունեցող որոշակի հատված:

Ընտրություններին մասնակցությունը որպես քաղաքացիական պարտականություն ընկալելու հարցում ևս նկատվում են տարիքային տարբերություններ[60]: Թեև բոլոր տարիքային խմբերում գերակշռում է համաձայնությունը, 18–29 տարեկանների շրջանում ընտրություններին մասնակցությունը որպես քաղաքացիական պարտականություն ընկալողների մասնաբաժինը կազմում է 89.0%, մինչդեռ 30–44, 45–59 և 60 և ավելի տարեկանների շրջանում այն համապատասխանաբար կազմում է 96.5%, 97.4% և 98.2%[61] (տե՛ս Գծապատկեր 19-ը):

60. χ^2 = 37.08, df = 6, N = 1488, p < 0.001,Cramer's V = 0.112
61. 18-29 vs. 60+, outcome category = 1, Two-proportion test, statistic = 18.38, df = 1, p.adj < 0.001
18-29 vs. 30-44, outcome category = 1, Two-proportion test, statistic = 11.6, df = 1, p.adj < 0.01
18-29 vs. 45-59, outcome category = 1, Two-proportion test, statistic = 9.88, df = 1, p.adj < 0.05

Գծապատկեր 19. Ընտրություններին մասնակցությունը և քվեարկելը քաղաքացիական պարտականություն համարելու նկատմամբ համաձայնությունը՝ ըստ տարիքի (N=1488) (%):



Նշում. Տոկոսները հաշվարկվել են յուրաքանչյուր ենթախմբի ներսում: «ԴՊ» և «ՀՊ» պատասխանները ներառված չեն հաշվարկում, այդ պատճառով գծապատկերում ներկայացված N-ը 1500-ից փոքր է:

Վերոնշյալ արդյունքները ցույց են տալիս, որ ժողովրդավարության նկատմամբ տարաբնույթ վերաբերմունքը և արժեքային կողմնորոշումները հաճախ միաժամանակ ներառում են թե՛ ժողովրդավարական սկզբունքներին աջակցող, թե՛ ավելի կենտրոնացված կամ սահմանափակող կառավարման մոտեցումներ: Այս ընդհանուր պատկերը լրացնելու համար կարևոր է հասկանալ նաև, թե հարցվածներն իրենք ինչն են համարում Հայաստանի ժողովրդավարության ամենամեծ մարտահրավերը:

Հայաստանում ժողովրդավարության հիմնական մարտահրավերները

Պատասխանների մասնաբաժիններում կոռուպցիան իբրև մարտահրավեր նշվել է հարցվածների 3.4%-ի, օրենքի առաջ բոլորի հավասար չլինելը՝ 3.2%-ի, իսկ քաղաքական բևեռացումը՝ 3.0%-ի կողմից: Սա վկայում է այն մասին, որ թեև ինստիտուցիոնալ և քաղաքական խնդիրներն առկա են հանրային պատկերացումներում, դրանք այս հարցում ավելի հազվադեպ են դիտարկվում որպես ժողովրդավարության «ամենամեծ» մարտահրավերներ (տե՛ս Գծապատկեր 20-ը):

Ընդհանուր առմամբ, տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանի ժողովրդավարության մարտահրավերների մասին հարցվածների ընկալումները մի կողմից կապված են անվտանգության, կոռուպցիայի, իրավահավասարության և քաղաքական բևեռացման հետ, սակայն մյուս կողմից՝ մեծաթիվ «Այլ» և «Դժվարանում եմ պատասխանել» պատասխանները ցույց են տալիս, որ այս թեմայի շուրջ հանրային ընկալումները դեռևս բավական տարասեռ և ոչ միանշանակ են: Սա կարող է հուշել, որ ժողովրդավարության մարտահրավերները հասարակության կողմից ընկալվում են ոչ թե մեկ կենտրոնական խնդրի, այլ տարբեր փորձառությունների ու մտահոգությունների համադրության միջոցով:

Գծապատկեր 20. Ձեր կարծիքով՝ այսօր Հայաստանի ժողովրդավարության համար ո՞րն է ամենամեծ մարտահրավերը (N=1455) (%):



Նշում. Տարբերակները չեն ընթերցվել հարցվողների համար, վերջիններիս տրվել է մեկ պատասխան տալու հնարավորություն: «Այլ» տարբերակում խմբավորված են 3.0%-ից քիչ նշված պատասխանները, օրինակ՝ ներկայիս իշխանությունը, իշխանափոխության անհրաժեշտությունըմիասնականության պակասը,, արտաքին ուժերի ազդեցությունը և այլն:

Ժողովրդավարության մասին պատկերացումները հասարակության տարբեր խմբերում միատեսակ չեն: Թեև ժողովրդավարական արժեքների նկատմամբ ընդհանուր աջակցությունը բարձր է, տարիքային, կրթական և գենդերային խմբերի միջև նկատվում են որոշակի տարբերություններ՝ կապված ժողովրդավարական կառավարման, մասնակցության, ազատությունների և ուժեղ առաջնորդության վերաբերյալ ընկալումների հետ: Ստորև ներկայացված են այն հիմնական առանձնահատկությունները, որոնք բնորոշ են տարբեր սոցիալ-ժողովրդագրական խմբերին:

Ընդհանուր առմամբ, ժողովրդավարական երկրի մասին պատկերացումները առավել տարբերակված են տարիքային խմբերի միջև: Երիտասարդների շրջանում ժողովրդավարական արժեքների կարևորությունը համեմատաբար պակաս ակումուլյացված և տարասեռ է, ավագ սերնդի շրջանում՝ ավելի ընդգծված և կարգուկանոնի պահանջի հետ համադրված: Կրթական խմբերի դեպքում տարբերություններն առավելապես արտահայտվում են ժողովրդավարական կառավարման և անվտանգության պայմաններում ազատությունների սահմանափակման ընկալումներում. մասնավորապես՝ միջին մասնագիտական և միջնակարգ կամ ավելի ցածր կրթություն ունեցողները մի փոքր ավելի հաճախ են կարևորում ժողովրդավարական կառավարման մոդելը (տե՛ս Գծապատկեր 9-ը), մինչդեռ բարձրագույն կրթություն ունեցողներն առավել հակված են արդարացված համարել պատերազմի կամ ռազմական սպառնալիքի պայմաններում մամուլի ազատության սահմանափակումը (տե՛ս Գծապատկեր 15-ը):

3.3 Մասնակցություն և ներգրավվածություն

Այս բաժնում դիտարկվում են քաղաքացիների մասնակցության տարբեր ձևերի վերաբերյալ ընկալումները և փորձառությունները՝ տեղական մակարդակում կարծիքի հաշվի առնվելու գնահատումից մինչև հանրային ու քաղաքական հարցերի շուրջ կարծիք արտահայտելը, կազմակերպություններին անդամակցությունը և ընտրություններին մասնակցելու մտադրությունը: Մասնակցությունը ժողովրդավարական գործընթացների կարևոր բաղադրիչ է, քանի որ այն ցույց է տալիս ոչ միայն քաղաքացիների վերաբերմունքը հանրային

կյանքի նկատմամբ, այլև նրանց ներգրավվածության հնարավորություններն ու պատրաստակամությունը: Միաժամանակ, մասնակցության տարբեր ձևերը կարող են ունենալ տարբեր ինտենսիվություն՝ սկսած կարծիքի արտահայտումից մինչև կազմակերպված և ընտրական մասնակցություն, ցույցեր, երթեր, բողոքի ակցիաներ, հանրաքվեներ և այլն: Այս բաժինը հնարավորություն է տալիս հասկանալ, թե որքանով են հարցվածները իրենց տեսնում հանրային որոշումների և քաղաքական գործընթացների մասնակից:

Մասնակցությունը դիտարկվում է երեք մակարդակով՝

1. կարծիքի արտահայտում,
2. կազմակերպված մասնակցություն,
3. ընտրական մասնակցություն:

Այսպիսով՝ «Ձեր համայնքում քաղաքացիների կարծիքը որքանո՞վ է հաշվի առնվում տեղական իշխանությունների կողմից» հարցին տրված պատասխանները ցույց են տալիս, որ հարցվածների կեսից ավելին՝ 51.4%-ը, կարծում է, որ քաղաքացիների կարծիքը հիմնականում հաշվի է առնվում: Միևնույն ժամանակ, հարցվածների 27.3%-ը նշել է, որ քաղաքացիների կարծիքը հիմնականում հաշվի չի առնվում, իսկ 21.3%-ը դժվարացել է պատասխանել (տե՛ս Գծապատկեր 21-ը):

Գծապատկեր 21. Ձեր համայնքում քաղաքացիների կարծիքը որքանո՞վ է հաշվի առնվում տեղական իշխանությունների կողմից (N=1500) (%):

Ներկայացված տվյալները թույլ են տալիս եզրահանգել, որ տեղական մակարդակում քաղաքացիների կարծիքը հաշվի առնելու վերաբերյալ դրական ընկալումը գերակշռում է: Այնուամենայնիվ, հարցվածների ավելի քան մեկ քառորդը հակառակ կարծիք ունի, ինչը ցույց է տալիս, որ տեղական իշխանությունների արձագանքայնության վերաբերյալ գնահատականները միանշանակ չեն: Բացի այդ, դժվարացած պատասխանների համեմատաբար բարձր մասնաբաժինը կարող է վկայել, որ հարցվածների մի մասի համար տեղական իշխանությունների կողմից քաղաքացիների կարծիքը հաշվի առնելու աստիճանը հստակ գնահատելի կամ էական չէ:

Տեղական իշխանությունների կողմից քաղաքացիների կարծիքը հաշվի առնելու ընկալումները տարբերվում են կանանց և տղամարդկանց մոտ[62]: Կանանց շրջանում տեղական իշխանությունների կողմից քաղաքացիների կարծիքը հաշվի առնվելու մասին կարծիքն ավելի տարածված է (68.0%), քան տղամարդկանց շրջանում (62.1%)[63] (տե՛ս Գծապատկեր 22-ը):

62. $\chi^2 = 4.29$, df = 1, N = 1181, $p < 0.05$, Cramer's V = 0.06
63. Իգական vs. Արական, $\chi^2 = 4.55$, df = 1, p.adj < 0.05

Գծապատկեր 22. Տեղական իշխանությունների կողմից քաղաքացիների կարծիքը հաշվի առնելու ընկալումն՝ ըստ տարիքի և սեռի (%):



Նշում. Տոկոսները հաշվարկվել են յուրաքանչյուր ենթախմբի ներսում: «ԴՊ» և «ՀՊ» պատասխանները ներառված չեն հաշվարկում, այդ պատճառով գծապատկերում ներկայացված N-երը 1500-ից փոքր են:

Տեղական իշխանությունների կողմից քաղաքացիների կարծիքը հաշվի առնելու վերաբերյալ գնահատականները ցույց են տալիս մասնակցության ընկալման ինստիտուցիոնալ կողմը. այսինքն՝ որքանով են հարցվածները զգում, որ իրենց ձայնը կարող է լսելի լինել տեղական մակարդակում: Սակայն մասնակցության մասին ավելի ամբողջական պատկեր ստանալու համար կարևոր է դիտարկել նաև քաղաքացիների անձնական փորձը՝ արդյո՞ք նրանք վերջին մեկ տարվա ընթացքում որևէ ձևով արտահայտել են իրենց կարծիքը հանրային կամ քաղաքական հարցերի վերաբերյալ:

Վերջին մեկ տարվա ընթացքում քաղաքացիական կամ քաղաքական գործողությունների մասնակցության վերաբերյալ պատասխանները ցույց են տալիս, որ հարցվածների մեծամասնությունը՝ 76.3%-ը, նման գործողությունների չի մասնակցել: Միևնույն ժամանակ, հարցվածների 23.5%-ը նշել է, որ մասնակցել է առնվազն մեկ նման գործողության (տե՛ս Գծապատկեր 23-ը):

Գծապատկեր 23. Վերջին մեկ տարվա ընթացքում որևէ կերպ արտահայտե՞լ եք Ձեր կարծիքը հանրային կամ քաղաքական հարցերի վերաբերյալ (N=1500) (%):



Քաղաքացիական կամ քաղաքական մասնակցության փորձը, սակայն, հավասարաչափ բաշխված չէ բոլոր խմբերում: Կրթության մակարդակի կտրվածքով արձանագրվել են վիճակագրորեն նշանակալի տարբերություններ[64]: Հանրային կամ քաղաքական հարցերի վերաբերյալ կարծիք արտահայտելու փորձը բավականին տարածված է բարձրագույն կրթություն ունեցողների շրջանում (28.8%), որին հաջորդում են միջին մասնագիտական կրթություն ունեցողները (25.2%): Միջնակարգ կամ ավելի ցածր կրթություն ունեցողների շրջանում այդ ցուցանիշը կազմում է 17.0% (տե՛ս Գծապատկեր 24-ը):

Վիճակագրորեն նշանակալի տարբերություններ են դիտվում նաև սեռի հիմքով[65]: Տղամարդկանց 27.2%-ն է նշել, որ վերջին մեկ տարվա ընթացքում արտահայտել է իր կարծիքը հանրային կամ քաղաքական հարցերի վերաբերյալ, մինչդեռ կանանց շրջանում այդ ցուցանիշը կազմում է 20.4%[66] (տե՛ս Գծապատկեր 24-ը):

Գծապատկեր 24. Հանրային կամ քաղաքական հարցերի վերաբերյալ կարծիք արտահայտելու փորձն՝ ըստ կրթության մակարդակի և սեռի:



Նշում. Տոկոսները հաշվարկվել են յուրաքանչյուր խմբերի ներսում: «ԴՊ» և «ՀՊ» պատասխանները ներառված չեն հաշվարկում, այդ պատճառով գծապատկերում ներկայացված N-երը 1500-ից փոքր են:

Հանրային կամ քաղաքական հարցերի շուրջ կարծիք արտահայտելու փորձը ցույց է տալիս մասնակցության փաստացի մակարդակը: Միևնույն ժամանակ, այդ փորձը կարող է տարբերվել մասնակցության կարևորության վերաբերյալ ընդհանուր վերաբերմունքից: Հետևաբար հաջորդիվ դիտարկվում է, թե որքանով են հարցվածները կարևորում քաղաքացիների մասնակցությունը որոշումների կայացման հանրային գործընթացներում:

Քաղաքացիների մասնակցության կարևորության բարձր ընկալումը դեռևս չի նշանակում, որ մասնակցությունն արտահայտվում է կազմակերպված ձևերով: Այդ պատճառով կարևոր է դիտարկել նաև անդամակցությունը քաղաքական կուսակցություններին, ՀԿ-ներին, ակտիվիստական նախաձեռնություններին կամ այլ խմբերին:

Կազմակերպված մասնակցության ցածր մակարդակը ցույց է տալիս, որ քաղաքացիների ներգրավվածությունը հիմնականում չի դրսևորվում ֆորմալ կառույցների միջոցով: Սակայն ժողովրդավարական մասնակցության կարևոր ձևերից մեկը շարունակում է մնալ ընտրական մասնակցությունը: Այս համատեքստում հաջորդիվ դիտարկվում է առաջիկա խորհրդարանական ընտրություններին մասնակցելու պատրաստակամությունը:

64. $\chi^2 = 23.55$, df = 2, N = 1486, $p < 0.001$,Cramer's V = 0.126
65. $\chi^2 = 9.17$, df = 1, N = 1496, $p < 0.01$, Cramer's V = 0.078
66. Իգական vs. Արական $\chi^2 = 9.54$, df = 1, p.adj < 0.01

Քաղաքական կամ քաղաքացիական գործընթացներին մասնակցության կարևորության վերաբերյալ տվյալները ցույց են տալիս, որ հարցվածների մեծամասնությունը՝ 73.3%-ը, մասնակցությունն ավելի շուտ կարևոր է համարում: Հարցվածների 12.9%-ի համար այն ավելի շուտ կարևոր չէ, իսկ 9.9%-ը նշել է, որ մասնակցությունը ոչ կարևոր է, ոչ էլ անկարևոր (տե՛ս Գծապատկեր 25-ը):

Ընդհանուր առմամբ, արդյունքները վկայում են, որ հարցվածների շրջանում քաղաքական և քաղաքացիական մասնակցության կարևորության ընկալումը գերակշռում է, թեև մասնակցության փաստացի մակարդակը կարող է տարբերվել դրա կարևորության գնահատականից:

Գծապատկեր 25. Քաղաքացիների մասնակցության կարևորությունը որոշումների կայացման հանրային գործընթացներում (N=1500) (%):



Քաղաքացիների մասնակցության կարևորության ընկալումը տարբեր տարիքային խմբերում ընդհանուր առմամբ մոտ է, սակայն առկա տարբերությունները վիճակագրորեն նշանակալի են[67]: Քաղաքացիների մասնակցությունը կարևոր համարողների մասնաբաժինը տատանվում է 75.0%-ից մինչև 78.4%: Ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 60 և ավելի տարեկանների շրջանում (78.4%), իսկ ամենացածրը՝ 30–44 տարեկանների շրջանում (75.0%)[68] (տե՛ս Գծապատկեր 26-ը):

Գծապատկեր 26. Որոշումների կայացման հանրային գործընթացներում քաղաքացիների մասնակցությունը կարևոր համարող հարցվածների մասնաբաժինը՝ ըստ տարիքի:



Նշում. Տոկոսները հաշվարկվել են յուրաքանչյուր ենթախմբի ներսում: «ԴՊ» և «ՀՊ» պատասխանները ներառված չեն հաշվարկում, այդ պատճառով գծապատկերում ներկայացված N-ը 1500-ից փոքր է:

67. $\chi^2 = 16.65$, df = 6, N = 1433, $p < 0.05$,, Cramer's V = 0.076
68. 30-44 vs. 60+, $\chi^2 = 14.44$, df = 2, p.adj < 0.01

Քաղաքական կամ հասարակական կազմակերպություններին անդամակցության վերաբերյալ տվյալները ցույց են տալիս, որ հարցվածների գերակշիռ մեծամասնությունը չի անդամակցում դիտարկված կառույցներից որևէ մեկին: Ամենաբարձր անդամակցությունը գրանցվել է կրոնական խմբերի դեպքում, սակայն այն ևս շատ փոքր է. հարցվածների 4.1%-ը նշել է, որ որևէ կրոնական խմբի անդամ է: Քաղաքական կուսակցությանը անդամակցելու մասին նշել է 2.7%-ը, տեղական հասարակական կազմակերպությանը՝ 2.5%-ը, քաղաքական կամ ակտիվիստական նախաձեռնությանը՝ 1.7%-ը, իսկ միջազգային հասարակական կազմակերպությանը՝ 1.1%-ը (տե՛ս Գծապատկեր 27-ը):

Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ կազմակերպված մասնակցության ֆորմալ ձևերի մակարդակը շատ ցածր է: Ինչպես ցույց է տալիս Գծապատկեր 27-ը դիտարկված բոլոր կառույցների դեպքում անդամ չլինողների մասնաբաժինը գերազանցում է 95%-ը՝ տատանվելով 95.7%-ից մինչև 98.7%:

Գծապատկեր 27. Դուք ներկայումս այս խմբերից կամ կազմակերպություններից որևէ մեկի անդամ եք, թե՝ ոչ (N=1500) (%):



Առաջիկա խորհրդարանական ընտրություններին մասնակցելու պատրաստակամության վերաբերյալ տվյալները ցույց են տալիս, որ հարցվածների մեծ մասը արտահայտում է մասնակցության հստակ մտադրություն: Մասնավորապես, հարցվածների 79.7%-ը նշել է, որ միանշանակ կմասնակցի ընտրություններին, իսկ 8.2%-ը՝ որ ամենայն հավանականությամբ կմասնակցի: Միևնույն ժամանակ, 4.6%-ը նշել է, որ միանշանակ չի մասնակցի, իսկ 3.2%-ը՝ որ ամենայն հավանականությամբ չի մասնակցի (տե՛ս Գծապատկեր 28-ը):

Հարցվածների ևս 4.0%-ը դժվարացել է պատասխանել կամ հրաժարվել է պատասխանել: Ընդհանուր առմամբ, տվյալները ցույց են տալիս, որ առաջիկա խորհրդարանական ընտրություններին մասնակցելու պատրաստակամությունը բավականին բարձր է. մասնակցության հստակ կամ հավանական մտադրություն արտահայտածների ընդհանուր մասնաբաժինը կազմում է 87.9%, եթե համադրվում են «միանշանակ կմասնակցեմ» և «ամենայն հավանականությամբ կմասնակցեմ» պատասխանները (տե՛ս Գծապատկեր 28-ը): ՀՀ Ազգային Ժողովի 2026 թ.-ի հունիսին կայացած ընտրությունների արդյունքները լրացումն են վերը

նշված տվյալների և ցույց են տալիս, որ ընտրողների մեծ մասը՝ 58.9%-ը, մասնակցել է ընտրություններին[69]:

Գծապատկեր 28. Ասացեք խնդրեմ, հասցրե՞լ եք կողմնորոշվել՝ մասնակցելու եք առաջիկա խորհրդարանական ընտրություններին՝ անկախ նրանից, թե որ թեկնածուի օգտին եք հակված քվեարկել (N=1500) (%):



Նշում. հարցը չափել է մտադրություն, ոչ թե փաստացի մասնակցություն:

Քաղաքացիական մասնակցության վերաբերյալ պատկերացումները և գործնական ներգրավվածությունը միշտ չէ, որ համընկնում են: Թեև հարցվածների մեծ մասը կարևորում է քաղաքացիների մասնակցությունը հանրային որոշումների կայացման գործընթացներին և պատրաստակամություն է հայտնում մասնակցել ընտրություններին, մասնակցության տարբեր ձևերի տարածվածությունը զգալիորեն տարբերվում է սոցիալ-ժողովրդագրական խմբերի միջև: Ստորև ներկայացված են այդ տարբերությունների հիմնական միտումները՝ կապված լսելիության ընկալման, կարծիքի արտահայտման և կազմակերպված մասնակցության հետ:

Ընդհանուր առմամբ, մասնակցության պատկերը բազմաշերտ է. հարցվածների մեծ մասը կարևորում է մասնակցությունը և արտահայտում է ընտրություններին մասնակցելու պատրաստակամություն, սակայն վերջին մեկ տարվա ընթացքում հանրային կամ քաղաքական կարծիք արտահայտածների մասնաբաժինը զգալիորեն ավելի ցածր է, իսկ կազմակերպված մասնակցությունը՝ շատ սահմանափակ: Սա ցույց է տալիս, որ Հայաստանում մասնակցության մասին պատկերացումները հիմնականում արտահայտվում են ընտրական մասնակցությունը կարևորելու մակարդակում և էականորեն թույլ են ֆորմալ կազմակերպված (տեղական կամ միջազգային ՀԿ-ներ, քաղաքացիական կամ ակտիվիստական նախաձեռնություն, քաղաքական կուսակցություն և այլն), և առօրյա քաղաքացիական ներգրավվածության պրակտիկաներում:

69. Տե՛ս https://www.elections.am/Elections/Parliamentary, դիտված է 25.06.2026

Բաժին 4.

Եզրակացություններ և առաջարկներ

4.1 Եզրակացություններ

Զեկույցում ներկայացված արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանում ժողովրդավարության հանրային ընկալումները միաշերտ չեն: Մի կողմից՝ հարցվածների շրջանում լայն աջակցություն ունեն ժողովրդավարական արժեքները՝ ազատ և արդար ընտրությունները, օրենքի առաջ հավասարությունը, մարդու իրավունքների պաշտպանությունը, ազատ արտահայտվելու հնարավորությունը և քաղաքացիների մասնակցությունը: Մյուս կողմից՝ հարցվածների ընկալումներում ընդգծված է նաև ուժեղ առաջնորդության, ուժեղացված կարգուկանոնի և որոշ իրավիճակներում սահմանափակող կառավարման մոտեցումների նկատմամբ պահանջը:

Ժողովրդավարական արժեքների աջակցությունը զուգակցվում է կարգուկանոնի, վճռական առաջնորդության և որոշ իրավիճակներում ինստիտուցիոնալ բացառությունների նկատմամբ հանդուրժողականության հետ:

Հետազոտության արդյունքների համադրումը հնարավորություն է տալիս ժողովրդավարության հանրային ընկալումները ներկայացնել չորս հիմնական թեմատիկ առանցքների միջոցով՝ ընտրական արդարություն, իրավունքներ և հավասարություն, քաղաքացիական ազատություններ, ինչպես նաև կարգուկանոնի և ուժեղ կառավարման ակնկալիքներ: Այս առանցքները առաջարկվում են որպես հետազոտության արդյունքների սինթեզման և ներկայացման վերլուծական շրջանակ և արտացոլում են ժողովրդավարության ինչպես ինստիտուցիոնալ, այնպես էլ արժեքային և առօրյա ընկալումների տարբեր կողմերը (տե՛ս Գծապատկեր 29-ը):

Գծապատկեր 29. Ժողովրդավարության ընկալումների կողմնացույց:



1. Ընդհանուր եզրահանգմամբ՝ Հայաստանում ժողովրդավարության հանրային ընկալումները բնութագրվում են բարձր արժեքային աջակցությամբ, բայց նաև ուժեղ առաջնորդության մասին պահանջով:
2. Ժողովրդավարությունը նախևառաջ ընկալվում է որպես ազատ և արդար ընտրությունների, իրավահավասարության և մարդու իրավունքների համակարգ:
3. Ժողովրդավարությունը հանրության մեծամասնության կողմից լայնորեն աջակցվող կառավարման ձև է:
4. Հանրային արժեքային դաշտում ավանդույթներին հավատարիմ մնալու մոտեցումը գերակշռում է փոփոխությունների հանդեպ բաց լինելու դիրքորոշման նկատմամբ:
5. Ժողովրդավարական երկրի ցանկալի հատկանիշների շարքում առաջնային է կարգուկանոնը:
6. Ժողովրդավարական արժեքների բարձր աջակցությունը զուգակցվում է ուժեղ առաջնորդության ընդգծված պահանջի հետ:
7. Օրենքի գերակայության ընկալումը հանրության մեջ ամբողջությամբ ամրապնդված չէ, և որոշ դեպքերում «երկրի շահը» կարող է դիտարկվել որպես օրենքի խախտումը արդարացնելու հիմք:
8. Քաղաքացիների քաղաքական ազդեցության և ընտրական մասնակցության կարևորության մասին համոզմունքները հանրային ընկալումներում բավականին ուժեղ են:
9. Մասնակցության կարևորումը բարձր է, սակայն փաստացի մասնակցությունը զգալիորեն ավելի ցածր է: Մարդիկ կարևորում են մասնակցությունը, բայց քիչ են ներգրավվում որոշում կայացնելու գործընթացներին գործնական կամ կազմակերպված ձևերով:
10. Ընտրություններին մասնակցելու ընդհանուր պատրաստակամությունը բարձր է, բայց երիտասարդների շրջանում ավելի թույլ է արտահայտված:

4.2 Տվյալներից բխող ծրագրային հնարավոր ուղղություններ

Ժողովրդավարության վերաբերյալ հանրային կրթության զարգացում	Ժողովրդավարության առանձին հատկանիշների վերաբերյալ արձանագրված տարբեր ընկալումները կարող են հիմք հանդիսանալ ուսումնասիրելու և զարգացնելու հանրային կրթական ծրագրերը՝ ընտրությունների, օրենքի գերակայության, հաշվետվողականության, անկախ դատարանների, ազատ մամուլի և մարդու իրավունքների փոխկապակցվածության շուրջ:
Երիտասարդների մասնակցությանն ուղղված հնարավոր ծրագրեր	18–29 տարեկանների շրջանում արձանագրված որոշ տարբերությունները կարող են հիմք դառնալ երիտասարդների ժողովրդավարական ընկալումների և մասնակցության խոչընդոտների լրացուցիչ ուսումնասիրության համար: Դրա հիման վրա առաջարկվում է փորձարկել կրթական և մասնակցային նախաձեռնություններ բուհերում, երիտասարդական կենտրոններում կամ թվային հարթակներում:

Օրենքի գերակայության և սահմանադրականության ընկալումների վերաբերյալ ուսումնասիրություն	Սահմանադրականության և քաղաքական նպատակներով օրենքի խախտման վերաբերյալ արձանագրված դիրքորոշումները կարող են հիմք հանդիսանալ ավելի խորությամբ ուսումնասիրելու օրենքի հավասար կիրառման և սահմանադրականության վերաբերյալ հանրային ընկալումները: Արդյունքների հիման վրա առաջարկվում է մշակել և փորձարկել համապատասխան հաղորդակցական կամ կրթական մոտեցումներ:
Առաջնորդության տարբեր ընկալումների ուսումնասիրություն	Ուժեղ առաջնորդության նկատմամբ բարձր աջակցությունը, ինչպես նաև առաջնորդի ինստիտուցիոնալ անկախության վերաբերյալ պատասխանները կարող են հիմք հանդիսանալ լրացուցիչ որակական ուսումնասիրության համար՝ հասկանալու, թե հարցվածներն ինչ իմաստ են վերագրում «ուժեղ» և «անկախ» առաջնորդ հասկացություններին: Դրա հիման վրա առաջարկվում է մշակել հաղորդակցական մոտեցումներ՝ արդյունավետ առաջնորդության և ժողովրդավարական հաշվետվողականության փոխհարաբերության վերաբերյալ:
Կարգուկանոնի և ժողովրդավարական կառավարման փոխհարաբերության ուսումնասիրություն	Կարգուկանոնի բարձր կարևորումը կարող է հիմք դառնալ ուսումնասիրելու, թե ինչպես են քաղաքացիները հասկանում կարգուկանոնի, պետական արդյունավետության, քաղաքացիական ազատությունների և ժողովրդավարական ինստիտուտների փոխհարաբերությունը: Հետագա ուսումնասիրության արդյունքներով առաջարկվում է փորձարկել համապատասխան հանրային հաղորդակցության մոտեցումներ:
Ազատ մամուլի և խոսքի ազատության ընկալումների խորքային ուսումնասիրություն	Ազատ մամուլի համեմատաբար ավելի ցածր գնահատականը կարող է հիմք դառնալ նախ ուսումնասիրելու դրա պատճառները և այն իմաստները, որոնք հարցվածները վերագրում են մամուլի ազատությանը: Այդ ուսումնասիրության հիման վրա առաջարկվում է մշակել և փորձարկել հաղորդակցական կամ կրթական նախաձեռնություններ:
Տեղական մասնակցության հնարավոր մեխանիզմների զարգացում	Քաղաքացիների կարծիքը համայնքային որոշումներում հաշվի առնելու վերաբերյալ արձանագրված գնահատականները կարող են հիմք հանդիսանալ տեղական մասնակցության առկա մեխանիզմների հասանելիությունն ու ընկալումը լրացուցիչ ուսումնասիրելու համար: Հետագայում առաջարկվում է փորձարկել հանրային լսումների, մասնակցային բյուջետավորման կամ հետադարձ կապի այլ ձևաչափեր:

Մասնակցության արժեքային և վարքագծային տարբերության ուսումնասիրություն	Մասնակցության կարևորության բարձր գնահատման և փաստացի մասնակցության ավելի սահմանափակ մակարդակի միջև տարբերությունը կարող է հետագա ուսումնասիրության ուղղություն լինել: Առաջարկվում է ուսումնասիրել մասնակցությանը խոչընդոտող գործոնները և դրանց հիման վրա փորձարկել ավելի հասանելի ու պարզ մասնակցային ձևաչափեր:
Ֆորմալ և ոչ ֆորմալ քաղաքացիական կազմակերպվածությանն աջակցություն	Կուսակցություններին, ՀԿ-ներին և ակտիվիստական նախաձեռնություններին անդամակցության ցածր մակարդակը կարող է հիմք հանդիսանալ քաղաքացիական կազմակերպվածությանը նպաստող կամ խոչընդոտող գործոնների լրացուցիչ ուսումնասիրության համար: Հետագայում առաջարկվում է փորձարկել համայնքային նախաձեռնությունների, կամավորական խմբերի, երիտասարդական ակումբների կամ տեղական թեմատիկ ցանցերի տարբեր ձևաչափեր:
Տարբեր խմբերին ուղղված հաղորդակցության հնարավոր մոտեցումներ	:Սոցիալ-ժողովրդագրական խմբերի միջև արձանագրված տարբերությունները կարող են հիմք հանդիսանալ ուսումնասիրելու, թե արդյոք անհրաժեշտ են տարբեր խմբերին հարմարեցված հաղորդակցական մոտեցումներ: Հետագա ծրագրային մշակման շրջանակում առաջարկվում է փորձարկել հաշվետվողականության և մասնակցության մեխանիզմների ավելի հասանելի և տեսանելի ներկայացման տարբեր ձևաչափեր:

Գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն. (1995). https://www.arlis.am
2. ՀՀ Սահմանադրության փոփոխություններ. (2005). ARLIS. https://www.arlis.am
3. ՀՀ ընտրական օրենսգիրք. (1999). ARLIS. https://www.arlis.am
4. ՀՀ ընտրական օրենսգիրք. (2011). ARLIS. https://www.arlis.am
5. ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին». (1995, փոփոխություններով). ARLIS. https://www.arlis.am
6. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով. «Ընտրություններ» բաժին. https://www.elections.am/
7. ՀՀ վարչապետի աշխատակազմ. «Հայաստանի Հանրապետության կառավարման համակարգը». https://www.primeminister.am/hy/system-of-government/
8. ՀՀ նախագահի պաշտոնական կայք. «ՀՀ նախագահի լիազորությունները». https://www.president.am/en/Powers-of-the-President/
9. ՀՀ արդարադատության նախարարություն. «Դատաիրավական բարեփոխումների ռազմավարություններ». https://moj.am/page/491
10. ՀՀ վիճակագրական կոմիտե. (2025). Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտություն (ILCS 2025).
11. Dahl, R. A. (1971). Polyarchy: Participation and Opposition. New Haven: Yale University Press.
12. DataReportal. (2024). Digital 2024: Armenia. DataReportal – Global Digital Insights. https://datareportal.com/reports/digital-2024-armenia
13. DeVellis, R. F. (2017). Scale Development: Theory and Applications (4th ed.). Thousand Oaks, CA: SAGE Publications.
14. Diamond, L. (1999). Developing Democracy: Toward Consolidation. Baltimore: Johns Hopkins University Press.
15. Easton, D. (1965). A Systems Analysis of Political Life. New York: Wiley.
16. Easton, D. (1975). A re-assessment of the concept of political support. British Journal of Political Science, 5(4), 435–457.
17. Economist Intelligence Unit. (2025). Democracy Index 2024: What's Wrong with Representative Democracy? London: Economist Intelligence Unit.
18. Freedom House. (2010). Nations in Transit 2010: Armenia. https://www.refworld.org/reference/annualreport/freehou/2010/76718
19. Freedom House. (2018). Freedom on the Net 2018: Armenia. https://freedomhouse.org/country/armenia/freedom-net/2018
20. Freedom House. (2024). Nations in Transit 2024: Armenia. Washington, DC: Freedom House. https://freedomhouse.org/country/armenia/nations-transit/2024
21. Freedom House. (2025). Freedom in the World 2025: Armenia. Washington, DC: Freedom House. https://freedomhouse.org/country/armenia/freedom-world/
22. Inglehart, R., & Welzel, C. (2005). Modernization, Cultural Change, and Democracy: The Human Development Sequence. Cambridge: Cambridge University Press.

23. Kostanyan, A. (2004). The OSCE and the anti-corruption movement in Armenia: Enlarging co-operation between the OSCE and Transparency International. In OSCE Yearbook 2004. https://www.ifsh.de/file-CORE/documents/yearbook/english/04/Kostanyan.pdf

24. Levitsky, S., & Ziblatt, D. (2018). How Democracies Die. New York: Crown.

25. Mishler, W., & Rose, R. (2001). What are the origins of political trust? Testing institutional and cultural theories in post-communist societies. Comparative Political Studies, 34(1), 30–62.

26. Nunnally, J. C., & Bernstein, I. H. (1994). Psychometric Theory (3rd ed.). New York: McGraw-Hill.

27. Schumpeter, J. A. (1942). Capitalism, Socialism and Democracy. New York: Harper & Brothers.

28. Statbase. (2025). Democracy Index, Armenia (2006–2024). https://statbase.org/data/arm-democracy-index/

29. Suthers, E., & Lanskoy, M. (2019). Armenia's Velvet Revolution. Journal of Democracy, 30(2), 85–99.

30. U.S. Department of State. (2019). Armenia 2018 Human Rights Report. https://www.state.gov/wp-content/uploads/2019/03/ARMENIA-2018.pdf

31. V-Dem Institute. (2025). Democracy Report 2025 / Electoral Democracy Index 2025. Gothenburg: Varieties of Democracy Institute, University of Gothenburg.

32. V-Dem / Our World in Data. (2025). Electoral Democracy Index, Armenia. https://ourworldindata.org/grapher/electoral-democracy-index

33. Welzel, C. (2013). Freedom Rising: Human Empowerment and the Quest for Emancipation. Cambridge: Cambridge University Press.

Հավելվածներ

Հավելված 1. Հարցվածների սոցիալ-ժողովրդագրական հիմնական բնութագրիչները



Հավելված 2. Քանակական հետազոտության հարցաթերթ

Բարև՛ Ձեզ, իմ անունը ------ է: Ես ներկայացնում եմ Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն Հայաստան հիմնադրամը (ՀՌԿԿ-Հայաստանը), որն անկախ հետազոտական կազմակերպություն է:

Մենք Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի և Պրահայի քաղաքացիական հասարակության կենտրոնի աջակցությամբ իրականացնում ենք մի հետազոտություն, որի նպատակն է հասկանալ ժողովրդավարության մասին հայաստանցիների ընկալումները: Հետազոտության արդյունքները կօգնեն ավելի լավ հասկանալ հասարակության վերաբերմունը ժողովրդավարական գործընթացների նկատմամբ:

Հարցմանը մասնակցությունը կամավոր է, սակայն Ձեր ներդրումը չափազանց կարևոր է, քանի որ այն հնարավորություն կտա ստանալ արժեքավոր և վստահելի տվյալներ: Հետևաբար խնդրում ենք աջակցել մեզ և պատասխանել մեր հարցերին:

Ցանկանում եմ նաև տեղեկացնել, որ համակարգը մեր զրույցից որևէ պատահական հատված ձայնագրելու է իմ աշխատանքի որակը վերահսկելու նպատակով: Սակայն վստահեցնում ենք, որ ձայնագրությունը ոչնչացվելու է հետազոտությունն ավարտելուց անմիջապես հետո:

Հարցազրույցը տևելու է մոտավորապես 20 րոպե:

Տեխնիկական փոփոխականներ

Call_Result. Զրուցավար. նշե՛ք զանգի արդյունքը:

Հարցվողը պատասխանեց	1
Համարը չի պատասխանում/չի վերցնում	2
Համարն անհասանելի է կամ գոյություն չունի	3

Agreement. Համաձա՞յն եք մասնակցել հարցմանը:

[Տեխնիկական հրահանգ. հարցը տալ, եթե “Call Result” = 1:]

Հարցվողը համաձայնեց մասնակցել հարցմանը:	1
Հարցվողը մերժեց մասնակցել հարցմանը:	2
Հարցվողը չէր տիրապետում հարցազրույցի լեզվին:	3
Հարցվողը չմասնակցեց հարցմանը առողջական խնդիրների պատճառով:	4
Հարցվողը ղեկին էր:	5
Այլ (Նշե՛լ)	999

Refusal_Reason. Խնդրում եմ՝ նշել մերժման պատճառը:

[Տեխնիկական հրահանգ. հարցը տալ, եթե “Agreement” = 2:]

Ժամանակ չունի	1
Չի ցանկանում կիսել անձնական տեղեկատվություն	2
Չի կարող մասնակցել ընտանեկան դրդապատճառներով	3
Պատասխան չկա/չգիտի	4
Չի վստահում միջազգային կազմակերպություններին	5
Այլ (Նշե՛լ)	999

Start Time. [Ավտոմատ կերպով գրանցվում է SurveyCTO-ում:]

Duration. [Ավտոմատ կերպով գրանցվում է SurveyCTO-ում:]

Interviewer ID. Զրուցավար. ընտրե՛ք Ձեր կոդը ցուցակից:

D0a. Հաստատո՞ւմ եք, որ Ձեր 18 տարեկանը լրացել է:

Այո	1
Ոչ	0 [Ավարտե՛լ]

D0b. Ասացեք խնդրեմ, արդյո՞ք դուք 6 ամիս կամ ավել ապրում եք Հայաստանում, թե՞ ոչ:

Այո	1
Ոչ	0 [Ավարտե՛լ]

Ժողովրդագրություն. Մաս 1

Note: Նախ՝ ցանկանում եմ մի քանի հարց տալ Ձեր մասին:

D1. Այժմ պետք է լրացնեմ Ձեր սեռը:

[Զրուցավար. մի՛ կարդացեք տարբերակները:]

Իգական	1
Արական	2
Հրաժարվում եմ պատասխանել	-99

D2. Խնդրում եմ նշել Ձեր՝ արդեն լրացած տարիքը:

[Հրուցավար. եթե հարցվողը հրաժարվում է պատասխանել, մուտքագրե՛ք “-99”.]

D3a. Ասացեք խնդրեմ՝ ո՞ր երկրում եք մեծացել:

Հայաստան	1
Լեռնային Ղարաբաղ (Արցախ)	2
Ռուսաստան	3
Վրաստան	4
Ֆրանսիա	5
Իրան	6
ԱՄՆ	7
Լիբանան	8
Սիրիա	9
Այլ (նշե՛լ)	999
Հրաժարվում եմ պատասխանել	-99

D3b. Ո՞ր մարզում եք ներկայումս բնակվում:

Երևան	1
Արագածոտն	2
Արարատ	3
Արմավիր	4
Գեղարքունիք	5
Լոռի	6
Կոտայք	7
Շիրակ	8
Վայոց ձոր	9
Տավուշ	10
Սյունիք	11
Հրաժարվում եմ պատասխանել	-99

D4. Դուք բնակվում եք քաղաքային, թե՞ գյուղական բնակավայրում:

[Տեխնիկական հրահանգ. հարցը տա՛լ, եթե “D3b”!= 1:]

Քաղաքային	1
Գյուղական	2
Հրաժարվում եմ պատասխանել	-99

Ժողովրդավարության մասին ընկալումներ և վերաբերմունք

Note: Այժմ ցանկանում եմ մի փոքր զրուցել ժողովրդավարության վերաբերյալ Ձեր ընկալումների մասին:

Q1. Ձեր կարծիքով՝ ընդհանուր առմամբ՝ ի՞նչ է ենթադրում ժողովրդավարությունը:

[Զրուցավար. կարդացե՛ք տարբերակները, ընդունե՛ք բոլոր հնարավոր պատասխանները:]

[Տեխնիկական հրահանգ. խառնե՛լ տարբերակների հերթականությունը:]

Ազատ և արդար ընտրություններ	1
Մարդու իրավունքների պաշտպանություն	2
Կառավարություն, որը լսում է քաղաքացիներին	3
Օրենքի գերակայություն	4
Հավասարություն օրենքի առաջ	5
Տնտեսական բարեկեցություն և սոցիալական ապահովություն	6
Խոսքի և մամուլի ազատություն	7
Այլ (նշեք)	999
Դժվարանում եմ պատասխանել	-98
Հրաժարվում եմ պատասխանել	-99

Q2. Ի՞նչ եք կարծում՝ ներկայիս Հայաստանում Ձեզ նման մարդիկ ունե՞ն իրենց մտածածն ազատորեն արտահայտելու հնարավորություն:

Այո	1
Ոչ	0
Դժվարանում եմ պատասխանել	-98
Հրաժարվում եմ պատասխանել	-99

Q3. Ես կկարդամ երկու պնդում, իսկ Դուք ասացեք, թե դրանցից որն է լավագույնս նկարագրում Ձեր դիրքորոշումը:

[Զրուցավար. կարդացե՛ք տարբերակները:]

Հայաստանի ապագայի համար ավելի լավ կլինի, եթե այն հավատարիմ մնա իր ավանդույթներին և սովորույթներին	1
Հայաստանի ապագայի համար ավելի լավ կլինի, եթե այն բաց լինի ավանդույթների և սովորույթների փոփոխությունների հանդեպ	2
Դժվարանում եմ պատասխանել	-98
Հրաժարվում եմ պատասխանել	-99

Q4. Իսկ այս կարծիքներից ո՞րն է առավել մոտ Ձեր տեսակետին:

[Զրուցավար. կարդացե՛ք տարբերակները:]

Ժողովրդավարությունը գերադասելի է ցանկացած այլ տեսակի իշխանությունից	1
Որոշ հանգամանքներում կարող է նախընտրելի լինել ոչ ժողովրդավարական իշխանությունը	2
Ինձ նման քաղաքացիների համար կարևոր չէ, թե ինչպիսի կառավարություն ունենք	3
Դժվարանում եմ պատասխանել	-98
Հրաժարվում եմ պատասխանել	-99

Q5. Իսկ հիմա նույն սանդղակով գնահատեք, թե որքանով է կարևոր ապրել մի երկրում, ...

[Զրուցավար. կարդացե՛ք տարբերակները:]

[Տեխնիկական հրահանգ. խառնել պնդումների հերթականությունը:]

		Ավելի շուտ կարևոր չէ	Ոչ կարևոր է, ոչ էլ անկարևոր	Ավելի շուտ կարևոր է	ԴՊ	ՉՊ
Q5_1	որը կառավարվում է ժողովրդավար եղանակով:	1	2	3	-98	-99
Q5_2	որտեղ առկա է ազատ մամուլ:	1	2	3	-98	-99

Q5_3	որտեղ ապահովվում է կարգուկանոնը:	1	2	3	-98	-99
Q5_4	որը թույլ է տալիս մարդկանց ազատորեն բողոք արտահայտել և այլակարծություն դրսևորել:	1	2	3	-98	-99
Q5_5	որն ունի ազատ և անկախ դատական համակարգ:	1	2	3	-98	-99
Q5_6	որտեղ քաղաքացիներն իրենց ձայնն ունեն իրենց համայնքի և երկրի վրա ազդող որոշումների կայացման գործում:	1	2	3	-98	-99

Q6. Խնդրում եմ նշեք, թե որքանով եք համաձայն Հայաստանի կառավարման ձևերին վերաբերող հետևյալ պնդումներից յուրաքանչյուրի հետ.

[Զրուցավար. կարդացե՛ք տարբերակները:]

		Ավելի շուտ համաձայն եմ	Ոչ համաձայն եմ, ոչ էլ անհամաձայն	Ավելի շուտ համաձայն չեմ	ԴՊ	ՀՊ
Q6_1	Ունենալ ուժեղ առաջնորդ	3	2	1	-98	-99
Q6_2	Ունենալ Ազգային ժողովից, դատական համակարգից անկախ առաջնորդ:	3	2	1	-98	-99
Q6_3	Հայաստանը մասամբ կամ ամբողջությամբ կառավարվի բանակի կողմից:	3	2	1	-98	-99
Q6_4	Եկեղեցին պետք է ունենա իր ներկայացուցիչը Հայաստանի խորհրդարանում:	3	2	1	-98	-99
Q6_5	Պատերազմի կամ ռազմական սպառնալիքի պայմաններում մամուլի ազատության սահմանափակումն արդարացված է:	3	2	1	-98	-99
Q6_6	Սոցիալական ցանցերում վիրավորանք հասցնելու համար պետք է պատասխանատվության ենթարկել վիրավորողին:	3	2	1	-98	-99

Q6_7	Եթե ժողովրդավարությունը վտանգված է, ապա ընդունելի է այն պաշտպանել հակաժողովրդավարական մեթոդներով:	3	2	1	-98	-99
Q6_8	Հայաստանի քաղաքացիներն ունակ են ընտրել լավ ղեկավար:	3	2	1	-98	-99

Q7. Այժմ կկարդամ մի քանի դատողություն, իսկ Դուք ասացեք, թե որքանով եք համաձայն դրանցից յուրաքանչյուրի հետ:

[Զրուցավար. կարդացե՛ք տարբերակները:]

		Ավելի շուտ համաձայն եմ	Ոչ համաձայն եմ, ոչ էլ անհամաձայն	Ավելի շուտ համաձայն չեմ	ԴՊ	ՀՊ
Q7_1	Կառավարությունն արգելում է բողոքի ցույցերը, քանի որ դրանց ընթացքում բռնության գործադրման կամ անկայունության վտանգ է տեսնում:	3	2	1	-98	-99
Q7_2	Կառավարությունն առաջարկում է սահմանադրական փոփոխություն, որպեսզի ընդլայնի երկրի ղեկավարի լիազորությունները՝ Ազգային ժողովից կախվածությունը նվազեցնելու և բարեփոխումներն արագացնելու համար:	3	2	1	-98	-99
Q7_3	Դատարանը բավարար ապացույցների բացակայության դեպքում պետք է ազատ արձակի հանրության կողմից բացասաբար ընկալվող մեղադրյալին՝ հաշվի չառնելով հանրային տրամադրությունները:	3	2	1	-98	-99
Q7_4	Բնական է, որ համայնքային միջոցառման կազմակերպումն իրականացվի համայնքապետի բարեկամի ընկերության միջոցով, քանի որ այնտեղ «արդեն փորձված մարդիկ են»:	3	2	1	-98	-99
Q7_5	Կարելի է ընդունելի համարել, որ իմ նախընտրած քաղաքական գործիչը խախտի օրենքը, եթե դա բխում է երկրի շահերից:	3	2	1	-98	-99

Q7_6	Ոչ մի վատ բան չկա այն հարցում, որ պետական պաշտոն ունեցող իմ հարազատը լուծի իմ խնդիրը՝ իր կապերից օգտվելով:	3	2	1	-98	-99

Q8. Այժմ կրկին կկարդամ մի քանի պնդում, իսկ Դուք ասացեք, թե որքանով եք համաձայն դրանցից յուրաքանչյուրի հետ.

		Ամբողջ հաստատ եմ	Ոչ համաձայն եմ, ոչ էլ անհամաձայն	Ամբողջ հաստատ չեմ	ԴՊ	ՉՊ
Q8_1	Յուրքանչյուրիս ձայնը կարող է ազդեցություն ունենալ երկրի կառավարման վրա:	3	2	1	-98	-99
Q8_2	Հայաստանի ներկայիս իշխանությունները հաշվետու են քաղաքացիների առաջ իրենց ընդունած որոշումների համար:	3	2	1	-98	-99
Q8_3	Հայաստանում հնարավոր է ընտրությունների միջոցով իշխանություն փոխել:	3	2	1	-98	-99
Q8_4	Ընտրություններին մասնակցել և քվեարկելը յուրաքանչյուր քաղաքացու քաղաքացիական պարտականությունն է	3	2	1	-98	-99

Q9. Ձեր կարծիքով՝ այսօր Հայաստանի ժողովրդավարության համար ո՞րն է ամենամեծ մարտահրավերը:

[Զրուցավար. մի՛ կարդացեք տարբերակները, ընդունե՛ք մեկ տարբերակ:]

Կոռուպցիա	1
Օրենքի առաջ բոլորի հավասար չլինելը	2
Քաղաքացիների ցածր մասնակցություն	3
Հանրային բարձր սպասումները արագ արդյունքների նկատմամբ	4
Քաղաքացիների ցածր պատասխանատվությունը	5
Քաղաքական բևեռացում	6
Սոցիալ-տնտեսական խնդիրներ	7

Անվտանգային սպառնալիքներ	8
Հայաստանը չպետք է ժողովդրավար լինի	9
Այլ	999
Դժվարանում եմ պատասխանել	-98
Հրաժարվում եմ պատասխանել	-99

Քաղաքացիական մասնակցություն

Այժմ գրեթե մոտենում ենք հարցման ավարտին: Մեզ մնաց մի քանի կարևոր հարց քննարկել, և հարցումը կավարտենք:

Q10. Ձեր համայնքում քաղաքացիների կարծիքը որքանո՞վ է հաշվի առնվում տեղական իշխանությունների կողմից:

[Զրուցավար. կարդացե՛ք տարբերակները:]

Հիմնականում հաշվի է առնվում	2
Հիմնականում հաշվի չի առնվում	1
Դժվարանում եմ պատասխանել	-98
Հրաժարվում եմ պատասխանել	-99

Q11. Վերջին մեկ տարվա ընթացքում որևէ կերպ արտահայտե՞լ եք Ձեր կարծիքը հանրային կամ քաղաքական հարցերի վերաբերյալ (օրինակ՝ ստորագրահավաքի մասնակցել, բողոքի ցույցի մասնակցել, հանրային քննարկման մասնակցել, կամ կարծիք հայտնել սոցիալական ցանցերում):

Այո	1
Ոչ	0
Դժվարանում եմ պատասխանել	-98
Հրաժարվում եմ պատասխանել	-99

Q12. Ձեր կարծիքով՝ որքանո՞վ է կարևոր, որ քաղաքացիները մասնակցեն որոշումների կայացման հանրային գործընթացներին (օրինակ՝ քննարկումների, լսումների կամ քաղաքացիական նախաձեռնությունների միջոցով):

[Զրուցավար. կարդացե՛ք տարբերակները:]

Ավելի շուտ կարևոր է	3
Ոչ կարևոր է, ոչ էլ անկարևոր	2
Ավելի շուտ կարևոր չէ	1
Դժվարանում եմ պատասխանել	-98
Հրաժարվում եմ պատասխանել	-99

Q13. Դուք ներկայումս այս խմբերից կամ կազմակերպություններից որևէ մեկի անդա՞մ եք, թե՝ ոչ.

[Զրուցավար. կարդացե՛ք տարբերակները, ընդունե՛ք բոլոր հնարավոր պատասխանները:]

Տեղական ՀԿ	1
Միջազգային ՀԿ	2
Քաղաքացիական կամ ակտիվիստական նախաձեռնություն	3
Քաղաքական կուսակցություն	4
Կրոնական խումբ	5
Այլ (մանրամասնե՛լ)	999
ԴՊ	-98
ՀՊ	-99

Q14. Ասացեք խնդրեմ, հասցրե՞լ եք կողմնորոշվել՝ մասնակցելու եք առաջիկա խորհրդարանական ընտրություններին՝ անկախ նրանից, թե որ թեկնածուի օգտին եք հակված քվեարկել:

[Զրուցավար. կարդացե՛ք տարբերակները:]

Միանշանակ մասնակցելու եմ	1
Ամենայն հավանականությամբ մասնակցելու եմ	2
Ամենայն հավանականությամբ չեմ մասնակցելու	3
Միանշանակ չեմ մասնակցելու	4
ԴՊ	-98
ՀՊ	-99

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ. ՄԱՍ 2

D5. Նշվածներից ո՞րն է բնութագրում Ձեր ամուսնական կարգավիճակը:

[Զրուցավար. կարդացե՛ք տարբերակները:]

Ամուրի / Երբևէ չամուսնացած	1
Ամուսնացած	2
Ամուսնալուծված	3
Այրի/Կնակորույս	4
Հրաժարվում եմ պատասխանել	-99

D6. Ո՞րն է Ձեր ձեռք բերած ամենաբարձր կրթական աստիճանը:

Չունեմ տարրական կրթություն	1
Տարրական կրթություն (լրիվ կամ ոչ լրիվ)	2
Թերի միջնակարգ կրթություն	3
Միջնակարգ կրթություն	4
Միջին մասնագիտական կրթություն	5
Թերի բարձրագույն կրթություն	6
Բարձրագույն կրթություն (բակալավրի, մագիստրոսի կամ մասնագետի աստիճան)	7
Հետբուհական գիտական աստիճան	8
Դժվարանում եմ պատասխանել	-98
Հրաժարվում եմ պատասխանել	-99

D7. Թվարկվածներից ո՞րն է առավել ճիշտ նկարագրում Ձեր կարգավիճակը և գործունեության տեսակը: Խնդրում եմ, նշե՛ք այն գործունեությունը և կարգավիճակը, որը վերաբերում է անձամբ Ձեզ:

[Զրուցավար. կարդացե՛ք տարբերակները:]

Թոշակառու եմ և չեմ աշխատում	1
Ուսանող եմ և չեմ աշխատում	2
Չեմ աշխատում և չեմ փնտրում աշխատանք	3
Չեմ աշխատում, բայց փնտրում եմ աշխատանք	4
Աշխատում եմ կես կամ լրիվ դրույքով (նույնիսկ, եթե հարցվողը թոշակառու է կամ ուսանող)՝ ներառյալ սեզոնային աշխատանքը	5

Ինքնազբաղված եմ (նույնիսկ եթե հարցվողը թոշակառու է կամ ուսանող)՝ ներառյալ սեզոնային աշխատանքը	6
Հաշմանդամություն ունեմ և ի վիճակի չեմ աշխատել	7
Այլ (նշել)	999
Հրաժարվում եմ պատասխանել	-99

D8. Հայաստանում ապրում են մի շարք ազգություններ: Դուք Ձեզ ո՞ր ազգի ներկայացուցիչ եք համարում:

[Ձրուցավար. մի՛ կարդացեք տարբերակները, ընդունե՛ք մեկ տարբերակ:]

Հայ	1
Վրացի	2
Կովկասյան այլ ազգություն (Աբխազ, Լեզգի, Օս, և այլն)	3
Ռուս	4
Քուրդ կամ Յեզդի	5
Ասորի	6
Այլ ազգություն (նշե՛լ)	999
Դժվարանում եմ պատասխանել	-98
Հրաժարվում եմ պատասխանել	-99

D9. Այս իրավիճակներից ո՞րն է առավել լավ բնութագրում Ձեր տնային տնտեսության ներկայիս տնտեսական վիճակը:

Գումարը չի բավարարում սննդին	1
Գումարը բավարար է սննդի, բայց ոչ հագուստ գնելու համար	2
Գումարը բավարար է սննդի և հագուստի համար, բայց ոչ այնպիսի թանկարժեք ապրանքների համար, ինչպիսիք են սառնարանը, լվացքի մեքենան և այլն	3
Մենք կարող ենք գնել այնպիսի թանկարժեք ապրանքներ, ինչպիսիք են սառնարանը կամ լվացքի մեքենան	4
Մենք կարող ենք մեզ թույլ տալ գնել այն ամենն, ինչ ցանկանում ենք	5
Դժվարանում եմ պատասխանել	-98
Հրաժարվում եմ պատասխանել	-99

Մեկնաբանություններ

Note. Շնորհակալություն ժամանակ տրամադրելու և հարցմանը մասնակցելու համար:

Հավելված 3. Ընտրանքի և բնակչության համակազմն՝ ըստ սոցիալ-ժողովրդագրական հիմնական խմբերի

		Բնակչություն	Ընտրանք
Սեռ	Արական	43.1	45.5
	Իգական	56.9	54.5
Ընդամենը		**100**	**100**
Բնակավայրի տեսակ	Երևան	32.0	34.5
	Այլ քաղաքային	29.1	31.4
	Գյուղական	38.9	34.1
Ընդամենը		**100**	**100**
Տարիք	18-29	16.2	14.7
	30-44	27.3	32.7
	45-59	22.5	23.3
	60+	34.0	29.3
Ընդամենը		**100**	**100**

Ժողովրդավարության զարգացման հիմնադրամ

prague civil society centre

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն Հայաստան